կապիտալ
ասեթ
մենեջմենթ

ԿԱՄԱՎՈՐ 1 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՆՈՆՆԵՐ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Հաստատված է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ տնօրենների խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 2014.11.12-05 որոշմամբ

Գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում
10/02/2015թ. թիվ 21 02 որոշմամբ

ՀՎՀՀ 02618232

Խորհրդի նախագահ՝
Տ. Կարապետյան

ՀՀ ԿԲ նախագահ
Ա. Ջավադյան

Հաստատվել է՝

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 2013 թվականի մարտի 6-ի թիվ 2013.03.06-2 որոշմամբ

Փոփոխվել է՝

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 2013 թվականի ապրիլի 19-ի թիվ 2013.04.19-2 որոշմամբ

Վերջնական փոփոխություններով հաստատվել է՝

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 2013 թվականի ապրիլի 29-ի թիվ 2013.04.29-2 որոշմամբ

Նոր խմբագրությամբ հաստատվել է՝

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 2014.11.12-05 որոշմամբ

Ֆոնդի անվանումը՝	ԿԱՄ ավոր 1 Կենսաթոշակային Ֆոնդ
Ֆոնդի կարգավիճակը՝	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
Ֆոնդի տեսակն (ըստ ներդրումային քաղաքականության)՝	ՍՏԱՆԴԱՐՏ
Ֆոնդիի տեսակը (ըստ փայի թողարկման և հետգնման կառուցակարգի)՝	ԲԱՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 9
3. ՖՈՆԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 10
4. ՖՈՆԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 10
5. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ 12
6. ՖՈՆԴ ՄՈՒՏՔԱԳՐՎՈՂ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԸ 18
7. ՓԱՅԵՐԸ ԵՎ ՓԱՅԵՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 19
8. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 21
9. ՓԱՅԵՐԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ 23
10. ՖՈՆԴԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 25
11. ՓԱՅԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԳՆԵՐԸ 27
12. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ 28
13. ՓԱՅԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ 29
14. ՓԱՅԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ 30
15. ՓԱՅԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒՄԸ 34
16. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 34
17. ՊԱՀԱՌՈՒԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 36
18. ՓԱՅԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ 37
19. ՖՈՆԴԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐՆ ՈՒ ԾԱԽՍԵՐԸ 37
20. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ 38
21. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 40
22. ՖՈՆԴԻ ՄԻԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ 40
23. ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 42

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԿԱՄավոր 1 Կենսաթոշակային Ֆոնդի» (այսուհետև՝ «Ֆոնդ») կանոնները (այսուհետև՝ «Կանոններ»), որը հաստատվել է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի կողմից:

Ֆոնդի երկար անվանումն է ««Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության ԿԱՄավոր 1 Կենսաթոշակային Ֆոնդ»: Ֆոնդի կրճատ անվանումն է «ԿԱՄավոր 1» Կենսաթոշակային Ֆոնդ» կամ «ԿԱՄավոր 1»: Ֆոնդի անգլերեն անվանումն է «CAMavor 1 Pension fund», կրճատ՝ «CAMavor 1»:

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ստորև այբբենական կարգով ներկայացվող հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը, եթե կանոններով այլ բան սահմանված չէ՝

«Անուիտետ»	ունի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված նշանակությունը,
«Աշխատանքային օր»	ցանկացած օր, որը չի հանդիսանում շաբաթ կամ կիրակի օր (բացառությամբ այն շաբաթ կամ կիրակի օրերի, որոնք ՀՀ օրենսդրության համաձայն աշխատանքային օր են) կամ «Տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով տոնի կամ հիշատակի օր,
«Ածանցյալ Գործիք»	ունի ԱՇՄ-ի 3-րդ հոդվածի 3)-րդ կետով նախատեսված նշանակությունը,
«Ապահովագրական Ընկերություն»	ունի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակությունը,
«Արժեթղթեր»	Սույն կանոնների 5.1.(բ)-ից 5.1.(դ) կետերում նշված արժեթղթեր,
«Գործատուի ձեռք բերած կամավոր կենսաթոշակային սխեմա»	սխեմա, որով կուտակային կենսաթոշակ ստանալու համար կամավոր կուտակային վճարներ կարող են կատարվել միայն գործատուների կամ գործատուների և աշխատողների կողմից,
«Դիվերսիֆիկացիա	ռիսկերի նվազեցումն է տարբեր

(տարատեսականացում)»	ակտիվներում միաժամանակյա ներդրման միջոցով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ակտիվի ռիսկայնության ազդեցությունը այդ ակտիվների համախմբի վրա,
«ԵՄ» կամ **«Եվրոպական Միություն»**	անդամ պետությունների քաղաքական և տնտեսական միավորում, ստեղծված 1993թ.-ի Մաաստրիխտի պայմանագրի հիման վրա,
«ԵՀՄ օրենք»	«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը,
«Ինտերնետային տնային էջ»	կառավարչի Ինտերնետային տնային էջը՝ www.capitalfunds.am,
«Կառավարիչ»	2.3.կետում նշված Ֆոնդի կառավարիչ,
«Կառավարչի պարգևավճար»	ֆոնդի կառավարման համար Կառավարչին վճարվող պարգևավճար,
«Կառավարչի Կանոններ»	Կառավարչի կառավարման համապատասխան մարմնի կողմից հաստատված և գործող «Ֆոնդի Կառավարման Կանոնները»,
«Տարանցիկ հաշիվ»	Կառավարչի՝ հաճախորդների համար բացված հատուկ բանկային հաշիվ, որին մուտքագրվում են մասնակցի կողմից կատարվող կամավոր կուտակային վճարները՝ հետագայում մասնակիցների Ռեեստրավարի կողմից Ֆոնդի հաշվին փոխանցելու նպատակով,
«Կամավոր կուտակային կենսաթոշակ»	Ֆոնդի մասնակիցներին կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո վճարվող կենսաթոշակ,
«Կայուն եկամտային արժեթղթեր»	Արժեթուղթ, որի թողարկողը (ֆինանսական կամ ոչ ֆինանսական կազմակերպությունը) պարտավորվում է ապագայում վճարել որոշակի գումար (գումարներ) նախապես սահմանված ժամանակահատվածում (ժամանակահատվածներում), նաև միայն նման Արժեթղթերում ներդրում կատարող ներդրումային ֆոնդի փայեր,
«Կենտրոնական Բանկ»	Հայաստանի Հանրապետության

	Կենտրոնական Բանկ,
«Կուտակային վճար»	ունի ԿԿՄ 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով նախատեսված նշանակությունը,
«ԿԿՄ»	«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
«ԱՇՄ»	«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
«ՆՖՄ»	«Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենք,
«ՀՀՄ»	Հաշվապահական Հաշվառման մասին ՀՀ օրենք,
«Մասնակից»	Անձ, որը ցանկանում է ձեռք բերել Ֆոնդի փայ կամ Ֆոնդի փայի սեփականատեր է,
«Մարման գին»	փայի հետգնման գինն է, որը որոշվում է համապատասխան փայի հաշվարկային արժեքի և դրամական արտահայտությամբ Մարման վճարի տարբերությամբ,
«Մարման վճար»	14.6 կետով սահմանված վճարը,
«Ներդրումային ֆոնդ»	ունի ՆՖՄ-ի 3-րդ հոդվածի 1-ին մասին 1)-ին կետով նախատեսված նշանակությունը, իսկ եթե համատեքստից բխում է դա, ապա «Ներդրումային Ֆոնդ» կամ «Ֆոնդ» հասկացությունը կներառի նաև օտարերերկրյա ներդրումային ֆոնդը,
«Պահառու»	2.5 կետով սահմանված Ֆոնդի Պահառու,
«Պահառուի պարգևավճար»	պահառուական ծառայության մատուցման դիմաց Պահառուին վճարվող պարգևավճար,
«Ռեեստր»	Ֆոնդի մասնակիցների ռեեստր,
«Ռեեստրավար»	2.6 կետում սահմանված ռեեստրավար,
«Ռեեստրավարման կանոնակարգ»	Կառավարչի «Կամավոր Կուտակային Կենսաթոշակային և Ներդրումային ֆոնդերի Փայերի Պահառության և Ռեեստրավարման Կանոնակարգ»,
«Թողարկման գին»	փայի տեղաբաշխման գինն է, որը հավասար է համապատասխան փայի հաշվարկային

	արժեքին,
«ՏՀԶԿ»	1948 թվականին հիմնադրված որպես Եվրոպական Տնտեսական Համագործակցության Կազմակերպություն և 1961 թվականին վերանվանված Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպություն համաձայն Տնտեսական Համագործակցության և Զարգացման կոնվենցիայի,
«Օտարերկրյա Արժեթղթեր»	արտասահմանյան պետություններում թողարկված և շրջանառվող Արժեթղթեր,
«ՖՀՄՍ»	Հաշվապահական Ստանդարտների Միջազգային Խորհրդի կողմից ընդունված և կիրառվող ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ,
«Էական Իրադարձություններ»	իրադարձություններ, որոնք կարող են ազդել Ընկերության կողմից իր՝ ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոններով նախատեսված պարտավորությունների կատարման վրա և ներառումն են հետևյալ դեպքերից մեկը կամ մի քանիսը. (ա) շուկայի խափանումներ, այդ թվում՝ կարգավորվող շուկաների (բորսաների) չկանխատեսված փակումներ կամ աշխատանքի չպլանավորված ընդհատումներ, կարգավորվող շուկաների, բորսաների, բանկային համակարգի, վճարահաշվարկային համակարգի բնականոն աշխատանքի խափանումներ (այդ թվում նաև տեխնիկական), (բ) անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով առաջացած դեպքերը: Էական Իրադարձության առկայությունը կամ բացակայությունը որոշվում է Ընկերության կողմից:

Սույն կանոններում չսահմանված հասկացությունները ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված նշանակությունը:

1.2. Բացառությամբ եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոններով կամ այլ բան չի բխում դրա առանձին կանոնի իմաստից, ապա սույն Կանոններում.

(ա) եթե բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և հակառակը,

(բ) հղումը որևէ պայմանագրի, օրենքի, ենթաօրենսդրական ակտի, կանոնի նշանակում է հղում այդ պայմանագրին, օրենքին, ենթաօրենսդրական ակտին, կանոնին դրա փոփոխություններին և լրացումներին, որոնք կատարվել են մինչև սույն Կանոնների ուժի մեջ մտնելը և դրանից հետո,

(գ) հղումը «օրենսդրությանը» նշանակում է հղում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից վավերացված կամ Հայաստանի Հանրապետության Նախագահի հաստատած և ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերին, Հայաստանի Հանրապետության օրենքներին, և այլ օրենսդրական ակտերին, գերատեսչական ակտերին, դրանց փոփոխություններին և լրացումներին:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Սույն Կանոնները սահմանում են Ֆոնդի գործունեության և Մասնակիցների ու Կառավարչի հարաբերությունների հիմնական դրույթները: Կանոնները մշակվել են գործող օրենսդրությանը համապատասխան: Կանոնների տարբեր դրույթների միջև անհամապատասխանության կամ դրանց թերի լինելու դեպքում նման դրույթները մեկնաբանվում են՝ ելնելով Մասնակիցների շահերից:

2.2. Ֆոնդը բաց պայմանագրային ֆոնդ է և հանդիսանում է կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության իմաստով: Սույն Կանոնները հաստատվել են Կառավարչի տնօրենների խորհրդի կողմից 2013 թվականի ապրիլի 29-ին:

2.3. Կառավարիչ է հանդիսանում «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ, գրանցման համար՝ 1: Կառավարչի գտնվելու վայրն է. ՀՀ, ք. Երևան, Խորենացի 15, 2-րդ հարկ, գրասենյակ 5:

2.4. Ֆոնդի գտնվելու վայր է համարվում Կառավարչի գտնվելու վայրը:

2.5. Ֆոնդի Պահառու է հանդիսանում «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, գրանցման համար՝ 64, գրանցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 46:

2.6. Ռեեստրավար է հանդիսանում «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ, գրանցման համար՝ 1: Ռեեստրավարի գտնվելու վայրն է. ՀՀ, ք. Երևան, Խորենացի 15, 2-րդ հարկ, գրասենյակ 5:

2.7. Սույն Կանոններն ուժի մեջ են մտնում՝ Կենտրոնական Բանկի կողմից գրանցվելու պահից, իսկ Ֆոնդի փայերի ձեռքբերումը հնարավոր է գրանցմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օրվանից սկսած:

3. ՖՈՆԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3.1. Ֆոնդը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված սույն Կանոնների հիման վրա ձևավորվող, փայերի հրապարակային առաջարկի միջոցով հավաքագրված դրամական միջոցների և դրանց ներդրմամբ ձեռքբերված ակտիվների համախումբ է, որը կառավարվում է Կառավարիչի կողմից և հանդիսանում է Մասնակիցների ընդհանուր սեփականությունը:

3.2. Ֆոնդի գործունեության և Մասնակիցների ու Կառավարչի փոխհարաբերությունների հիմքերը սահմանվում են օրենսդրությամբ, Կանոններով և Կառավարչի Կանոններով:

3.3. Ֆոնդի հիմնական նպատակը Մասնակիցներին Ֆոնդի ակտիվները ԿԿՄ, ՆՖՄ օրենքներին և սույն Կանոններին համապատասխան կառավարելու միջոցով կուտակային կենսաթոշակներով ապահովումն է՝ Ֆոնդում կուտակված կենսաթոշակային ակտիվների երկարաժամկետ աճի ապահովման միջոցով:

3.4. Մասնակիցների համար Ֆոնդի եկամտաբերությունը երաշխավորված չէ:

3.5. Կառավարչի՝ սույն Կանոններով նախատեսված պարտավորությունների կատարման վրա կարող են ազդել Էական Իրադարձություններ: Վերջիններսերիս ի հայտ գալու դեպքում Կառավարիչը պատասխանատվություն չի կրելու այն խախտումների համար, որոնք ի հայտ են եկել այդպիսի Էական Իրադարձությունների հետևանքով:

4. ՖՈՆԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կառավարիչը Ֆոնդի ակտիվները ներդնում է օրենսդրությամբ և Կանոններով սահմանված սահմանափակումներին համապատասխան:

4.2. Ֆոնդի նպատակներն ապահովելիս Կառավարիչը կարող է Ֆոնդի ակտիվները ներդնել սույն Կանոնների 5.1. կետում նշված ակտիվներում: Կառավարիչը Ֆոնդի ակտիվները ներդնելիս չի կիրառում ճյուղային կամ տարածաշրջանային մոտեցում, սակայն ներդրումներ իրականացնելիս հաշվի է առնվում կոնկրետ ճյուղում կամ տարածաշրջանում ներդրումների կենտրոնացվածության աստիճանը: Ֆոնդի ակտիվների հաշվին կարող են կատարվել ներդրումներ ՀՀ դրամով, ինչպես նաև ՏՀԶԿ երկրների արժույթներով և Ռուսաստանի Դաշնության ռուբլով: Ֆոնդի ակտիվները ներդրվում են Կայուն եկամտային արժեթղթերում և միայն Կայուն եկամտային արժեթղթերում ներդրումներ կատարող Ներդրումային Ֆոնդի Արժեթղթերում, ինչպես նաև դրանց վրա հիմնված և միայն հեջավորման նպատակով օգտագործվող Ածանցյալ գործիքներում:

4.3. Ֆոնդի հիմնական ներդրումային ռիսկերը ներկայացվում են ստորև, որը հաշվի է առնում այն հանգամանքը, որ ներդրողը հանդիսանում է միջին մակարդակի տեղեկացված, ողջամիտ և իր ներդրումային նպատակները գիտակցող ներդրող և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկատվություն է պահանջում Կառավարչից: Ֆոնդի փայերում կատարվող ներդրումն ուղեկցվում է մի շարք ռիսկերով, որոնք կարող են ազդել Ֆոնդի եկամտաբերության և փայերի արժեքի վրա՝

(ա) **Շուկայական ռիսկ՝** Արժեթղթերի կամ այլ ակտիվների շուկայական գների աճի կամ նվազեցման ազդեցության ռիսկն է Ֆոնդի ակտիվների արժեքի վրա:

Շուկայական ռիսկը մեղմելու նպատակով ձեռք է բերվում բավարար տեղեկատվություն այն ակտիվների վերաբերյալ, որոնցում ներդրվել կամ ներդրվում են Ֆոնդի ակտիվները, Դիվերսիֆիկացվում են Ֆոնդի ներդրումները, ինչպես նաև կարող են օգտագործվել Ածանցյալ գործիքներ,

(բ) **Վարկային ռիսկ՝** Ֆոնդի ակտիվներում ընդգրկված Արժեթղթի թողարկողի կամ Ֆոնդի հաշվին իրականացված որևէ գործարքի մյուս կողմի իր պարտավորությունները լրիվ կամ մասնակի չկատարելու ռիսկն է (օրինակ՝ իր թողարկած պարտատոմսերը ժամանակին մարելու թողարկողի անկարողությունը): Վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով Ֆոնդի ներդրումները Դիվերսիֆիկացվում են և նախապատվությունը տրվում է ցածր վարկային ռիսկ ունեցող գործընկերներին,

(գ) **Հաշվարկային ռիսկ՝** Արժեթղթերի կամ ակտիվների հաշվարկային համակարգում գործարքի ժամանակին կամ ամբողջությամբ չկատարվելու ռիսկն է՝ պայմանավորված գործարքի մյուս կողմի իր պարտավորությունները ժամանակին կամ ամբողջությամբ չկատարելու հանգամանքով: Հաշվարկային ռիսկը նվազեցնելու նպատակով գործարքներն հիմնականում իրականացվում են Կարգավորվող շուկաներում, որտեղ գործում է «առաքում՝ վճարման դիմաց» սկզբունքը.

(դ) **Իրացվելիության ռիսկ՝** Ֆոնդի ակտիվները ժամանակին և սահմանված արդարացի գնով իրացնելու կամ պարտավորությունները ժամանակին և պատշաճ կատարելու անհնարինության ռիսկն է: Իրացվելության ռիսկը նվազեցնելու նպատակով Ֆոնդի ներդրումները Դիվերսիֆիկացվում են, և Ֆոնդի ակտիվների մի մասը կարող է ներդրվել կարճաժամկետ պարտքային Արժեթղթերում կամ պահվել բանկային հաշիվներում: Բացի այդ, կարող են օգտագործվել Ածանցյալ գործիքներ իրացվելիության ռիսկը նվազեցնելու նպատակով:

(ե) **Արտարժութային ռիսկ՝** արտարժույթի կուրսի փոփոխություններով պայմանավորված ներդրման արժեքի անցանկալի ուղղությամբ փոփոխության ռիսկն է: Արտարժութային ռիսկը հեջավորելու նպատակով կարող են օգտագործվել Ածանցյալ գործիքներ:

(զ) **Պահառուի ռիսկ՝** Պահառուի անվճարունակության, սնակացման, անգործության կամ դիտավորյալ գործողությունների հետևանքով իր կողմից ի պահ ընդունված ակտիվների կորստի կամ ոչնչացման ռիսկն է:

(է) **Թողարկողի ռիսկ (Արժեթղթերի գնային ռիսկ)՝** առանձին Արժեթղթի գնի անցանկալի ուղղությամբ փոփոխության ռիսկն է թողարկողի հետ կապված անբարենպաստ հանգամանքների ի հայտ գալով պայմանավորված (օրինակ՝ կառավարման սխալների պատճառով): Թողարկողի ռիսկը նվազագույնի հասցնելու նպատակով Ֆոնդի ներդրումները Դիվերսիֆիկացվում են, և թողարկողների գործունեությունը վերլուծվում և մոնիթորինգի է ենթարկվում:

(ը) **Գնաճի ռիսկ՝** գնաճի (ինֆլյացիայի) պատճառով ներդրումների իրական արժեքի նվազման ռիսկն է: Ինֆլյացիոն ռիսկը կառավարելու նպատակով Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել ինդեքսավորվող գործիքներում:

(թ) **Քաղաքական ռիսկ՝** ներդրումների արժեքի վրա հնարավոր զգալի ազդեցություն ունեցող անբարենպաստ զարգացումների կամ իրադարձությունների ի հայտ գալու ռիսկն է այն երկրներում, որտեղ ներդրվում են Ֆոնդի ակտիվները (օրինակ՝ իրավական միջավայրի փոփոխությունը):

(ժ) **Իրավական ռիսկ՝** Ֆոնդի գործունեության բնագավառում օրենսդրության փոփոխության ռիսկն է, այդ թվում՝ ներդրումային ֆոնդերի, մասնավորապես՝ կենսաթոշակային ֆոնդերի ոլորտը կարգավորող, Արժեթղթերի շուկան կարգավորող և հարկային օրենսդրության փոփոխությունները:

(ի) **Գործառնական ռիսկ՝** Ֆոնդի կառավարման գործընթացներում կորստի հնարավորությունն է պայմանավորված ներքին գործընթացների ոչ համարժեքությամբ, ծրագրային և տեխնիկական համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնով կամ արտաքին ազդեցություններով: Այս ռիսկը նվազեցնելու նպատակով, անընդհատ մոնիտորինգի են ենթարկվում ներքին գործընթացները, հնարավորինս ավտոմատացվում են ռիսկային գործառույթները, ինչպես նաև օգտագործվում են պահուստային տեխնիկական և ծրագրային համակարգերի հնարավորությունները, տեղեկատվությունը պարբերաբար պատճենվում է և պահվում առանձին վայրում, ցանկացած պահին այն վերականգնելու նպատակով, որտեղ որ հնարավոր է կիրառվում է երկու անձի կողմից կարևոր գործառույթների կնկնակի իրականացում, կամ ստուգումների և հաստատումների տարբերակը:

5. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

5.1. Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել հետևյալ գործիքներում՝

(ա) Բանկային ավանդներ կամ հաշիվներ (այդ թվում Ռուսաստանի Դաշնության բանկային ընթացիկ հաշիվներում),

(բ) պարտատոմսեր, փոխարկելի պարտատոմսեր և պարտքային այլ Արժեթղթեր,

(գ) 5.1.(բ) ենթակետում նշված Արժեթղթերի բաժանորդագրման կամ ձեռքբերման իրավունքը հավաստող փաստաթղթեր,

(դ) դրամական շուկայի գործիքներ,

(ե) Ածանցյալ գործիքներ՝ միայն հեջավորման նպատակով,

(զ) միայն Կայուն եկամտային արժեթղթերում ներդրումներ կատարող Ներդրումային ֆոնդերի փայեր, բաժնետոմսեր:

5.2. Յուրաքանչյուր ակտիվի դասի, թողարկողի տեսակի, տարածաշրջանի կամ ճյուղի կշիռը Ֆոնդի ակտիվներում որոշվում է ամենօրյա կառավարման ընթացքում:

5.3. Բանկային ավանդներում կատարվող ներդրումների սահմանափակումներն են՝

(ա) Կենսաթոշակային ակտիվները կարող են ներդրվել կամ պահպանվել այնպիսի բանկում, որը չի գտնվում անվճարունակության (սնանկության) գործընթացում,

(բ) Բանկային ավանդներում կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի Ֆոնդի ակտիվների 50%-ը: Մեկ բանկում, միևնույն խմբում ընդգրկված բանկերում, ինչպես նաև փոխկապակցված ճանաչված բանկերում կատարվող ներդրումները չպետք է գերազանցեն Ֆոնդի ակտիվների 10%-ը:

5.4. Արժեթղթերում կատարվող ներդրումների սահմանափակումներն են.

(ա) Ֆոնդի ակտիվների հաշվին ձեռքբերվող Արժեթղթերի թողարկող կարող է հանդես գալ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, միջազգային կազմակերպությունները և այլ առևտրային կազմակերպությունները, այդ թվում՝ Ներդրումային ֆոնդերը, որոնք ներդրում են կատարում միայն Կայուն եկամտային արժեթղթերում,

(բ) Ներդրումներն այնպիսի Ներդրումային ֆոնդերում, որի ակտիվներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն այլ Ներդրումային ֆոնդերի միջոցով կարող են ներդրվել միայն Կայուն եկամտային արժեթղթերում, նույնպես համարվում են Կայուն եկամտային արժեթղթերում կատարված ներդրումներ,

(գ) Հայաստանի Հանրապետության կամ Կենտրոնական Բանկի կամ արտասահմանյան պետության կամ այդ պետության կենտրոնական բանկի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված Արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի Ֆոնդի ակտիվների 60%-ը, ընդ որում, մեկ թողարկման մեջ (տրանշում) ներդրումների արժեքը չպետք է գերազանցի Ֆոնդի ակտիվների 20%-ը,

(դ) Արտասահմանյան պետությունների կամ այդ պետությունների կենտրոնական բանկերի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 40%-ը, ընդ որում, մեկ թողարկման մեջ (տրանշում) ներդրումների չափը չի կարող գերազանցել ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 20%-ը:

(ե) Վերոնշյալ 5.4. (գ) և 5.4. (դ) կետերով նախատեսված արժեթղթերում ներդրումների ընդհանուր չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 80%-ը:

(զ) Ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել մեկ թողարկողի թողարկած պարտքային արժեթղթերի ավելի քան 60%-ում:

(է) Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել այնպիսի Արժեթղթերում, որոնք ազատ շրջանառվում են և թույլատրված են առևտրի Հայաստանի Հանրապետությունում, ՏՀԶԿ և ԵՄ անդամ երկրներում, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունում գործող Կարգավորվող շուկաներում,

(ը) Հայաստանի Հանրապետության Համայնքների, արտասահմանյան պետության տեղական կառավարման մարմնի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված Արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել ֆոնդի ակտիվների 30%-ը:

(թ) Մեկ թողարկողի Արժեթղթերում Ֆոնդի ակտիվների ներդրումների առավելագույն չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 10%-ը, իսկ փոխկապակցված թողարկողների Արժեթղթերում Ֆոնդի ակտիվների ներդրումների առավելագույն չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 15%-ը,

(ժ) «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն արժեթղթավորման հիմնադրամների կողմից թողարկված Արժեթղթերում ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 10%-ը:

(ի) Մեկ թողարկողի կողմից թողարկված արժեթղթերում ներդրումներ կարող են կատարվել կամավոր Ֆոնդի ընդհանուր արժեքի մինչև 25%-ի չափով, եթե թողարկողը միջազգային ֆինանսական կազմակերպություն է:

(լ) Մեկ թողարկողի կողմից թողարկված արժեթղթերում ներդրումներ կարող են կատարվել ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի մինչև 25%-ի չափով, եթե դրանք ապահովված պարտատոմսեր են: Ապահովված պարտատոմսեր են համարվում՝

(Ա) բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն թողարկված ապահովված հիփոթեքային պարտատոմսերը.

(Բ) օտարերկրյա բանկերի թողարկած պարտքային արժեթղթերը, որոնց տեղաբաշխումից ստացված միջոցները ներդրվում են այնպիսի ակտիվներում, որոնք՝

(i) այդ պարտքային արժեթղթերի վավերականության ամբողջ ժամանակահատվածի համար բավարար ապահովություն (ծածկույթ) են դրանց գծով ամրագրված պարտավորությունների կատարման համար և

(ii) թողարկող բանկի անվճարունակության կամ սնանկության դեպքում առաջնահերթորեն օգտագործվում են այդ պարտքային արժեթղթերի գծով դրանց սեփականատերերի հանդեպ պարտավորությունների կատարման (արժեթղթի մայր գումարի (անվանական արժեքի) և հաշվեգրված տոկոսների փոխհատուցման) համար:

5.5. Ներդրումային Ֆոնդերում կատարվող ներդրումների սահմանափակումներն են՝

(ա) Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել այլ Ներդրումային ֆոնդերի փայերում և բաժնետոմսերում հետևյալ սահմանաչափերով՝

(Ա) Ֆոնդի ակտիվների մինչև 50%-ը կարող է ներդրվել Ներդրումային ֆոնդերի կողմից թողարկված Արժեթղթերում: Ընդ որում, Ներդրումային ֆոնդերի կողմից թողարկված Արժեթղթերում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 5%-ը, եթե այդ Ներդրումային Ֆոնդը չի բավարարում հետևյալ պահանջները՝

(i) հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված բաց, հրապարակային, ստանդարտ, տարատեսականացված Ներդրումային Ֆոնդ,

(ii) հանդիսանում է արտասահմանյան պետության կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող բաց և հրապարակային Ներդրումային Ֆոնդ, որի կանոնների (կանոնադրության) համաձայն Ներդրումային Ֆոնդի ակտիվների առնվազն 90%-ը պետք է ներդրվի միայն բանկային ավանդներում, պետական պարտատոմսերում, կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կամ թույլատրվող Արժեթղթերում,

(Բ) Մեկ ներդրումային ֆոնդի (մեկ կառավարչի կամ փոխկապակցված կառավարիչների կողմից կառավարվող ներդրումային ֆոնդերի) փայերում (բաժնետոմսերում) ներդրումների չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 25 տոկոսը:

(Գ) Ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել այլ ֆոնդերի փայերի կամ բաժնետոմսերի ավելի քան 25 տոկոսում:

5.6. Ածանցյալ գործիքներում կատարվող ներդրումների սահմանափակումներն են՝

(ա) Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել Ածանցյալ գործիքներում միայն Ֆոնդի ներդրումային նպատակներն ապահովելու կամ ռիսկերի հեջավորման նպատակով,

(բ) Մեկ անձի հետ Ածանցյալ գործիքով կնքված գործարքի չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 10%-ը՝ եթե Ֆոնդի հետ կնքվող գործարքի կողմը բանկ է, և 5%-ը՝ եթե Ֆոնդի հետ կնքվող գործարքի կողմն այլ ֆինանսական կազմակերպություն է: Ֆոնդի ակտիվներում ներառված բոլոր Ածանցյալ գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքը:

5.7. Ֆոնդի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումներն են.

(ա) Կառավարիչը կարող է հետաձգել արտասահմանյան պետություններում ներդրումների կատարումը մինչև Ֆոնդի ակտիվները չհատեն 300,000,000 (երեք հարյուր միլիոն) դրամի սահմանը և օտարերկրյա պահառության համար Պահառուն կունենա արտերկրում ներդրումները սպասարկելու պայմանագիր,

(բ) Նույն արտասահմանյան պետությունում կատարվող ներդրումները չպետք է գերազանցեն Ֆոնդի ակտիվների 25%-ը: Ընդ որում՝

(Ա) Օտարերկրյա Արժեթղթերում կատարվող ներդրումները չպետք է գերազանցեն Ֆոնդի ակտիվների 50%-ը:

(Բ) Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել միայն այնպիսի օտարերկրյա թողարկողների պարտքային արժեթղթերում, որոնք (երաշխավորված արժեթղթերի դեպքում՝ երաշխավորողը) ունեն Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ», Մուդիզի «Բաա» խմբի՝ «Բաա3» կամ Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ-» կամ ավելի բարձր վարկանիշ:

(Գ) Ֆոնդի ակտիվները որպես ավանդ կարող են ներդրվել միայն այնպիսի օտարերկրյա բանկում, որն ունի առնվազն Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ», Մուդիզի «Բաա» խմբի՝ «Բաա3» կամ Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ-» վարկանիշ:

(գ) արտարժույթով կատարվող ներդրումները չպետք է գերազանցեն Ֆոնդի ակտիվների 50%-ը,

(դ) Արտասահմանում ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել՝

(Ա) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների բանկային համակարգը վերահսկող լիազորված մարմնի կողմից արտոնագրված և վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների ավանդներում և բանկային հաշիվներում,

(Բ) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների, ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կենտրոնական բանկերի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորված Արժեթղթերում,

(Գ) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների համայնքների թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորված Արժեթղթերում,

(Դ) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված Արժեթղթերում,

(Ե) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող

լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող կայուն եկամտային ներդրումային ֆոնդերի փայերում որոնց ակտիվները չեն կարող ներդրվել բաժնային արժեթղթերում և դրանց վրա հիմնված ածանցյալ գործիքներում,

(Զ) Ռուսաստանի Դաշնության այն Արժեթղթերում, որոնք բավարարում են Կենտրոնական բանկի սահմանած չափանիշները,

(Է) ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով:

Կենտրոնական բանկը կարող է սահմանել այլ երկրների ցանկ, որտեղ կարող են ներդրվել կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները:

(ե) Ֆոնդի ակտիվներում ընդգրկված մեկ անձի կողմից թողարկված Արժեթղթերի, ներդրված բանկային ավանդների և տվյալ անձի հետ կնքված Ածանցյալ գործիքների ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի Ֆոնդի ակտիվների 30%-ը,

(զ) Ֆոնդի ակտիվներում ընդգրկված՝ մեկ անձի թողարկած արժեթղթերի (բացառությամբ ապահովված պարտատոմսերի), տվյալ անձի մոտ ներդրված բանկային ավանդների և տվյալ անձի հետ կնքված ածանցյալ գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի տվյալ ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 20 տոկոսը:

(է) ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել՝

(Ա) ֆոնդի Կառավարչի և Պահառուի, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված անձանց թողարկած Արժեթղթերում,

(Բ) ֆոնդի Կառավարչի կամ Պահառուի աուդիտն իրականացնող անձի թողարկած Արժեթղթերում,

(Գ) ֆոնդի Կառավարչին կամ Պահառուին խորհրդատվական ծառայություններ մատուցող անձանց թողարկած Արժեթղթերում,

(ը) Ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել այն ակտիվներում, որոնց օտարումն արգելված կամ սահմանափակված է,

(թ) Ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել անշարժ գույքում կամ այլ ֆիզիկական ակտիվներում (արվեստի գործեր, հուշադրամներ, սրբապատկերներ, հնաոճ ապրանքներ, թանկարժեք մեքենաներ և այլն):

(ժ) Ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել թանկարժեք մետաղներում կամ դրանց ձեռքբերման իրավունք տվող Արժեթղթերում,

(ժա) արգելվում է Ֆոնդի անունից՝

(Ա) թողարկել պարտքային արժեթղթեր,

(Բ) տրամադրել վարկի երաշխիք և ստանձնել գրավի կամ երաշխավորության պայմանագրից բխող պարտավորություններ,

(ժբ) Կառավարիչը կարող է Ֆոնդի անունից ներգրավել վարկեր, կնքել ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ և իրականացնել Արժեթղթերով այլ փոխառուական գործառնություններ մինչև Ֆոնդի ակտիվների 10%-ի չափով: Ներգրավված յուրաքանչյուր վարկի կամ ստանձնած պարտավորության ժամկետը չի կարող գերազանցել 3 ամիսը,

(ժգ) Նշված սահմանափակումները առավելագույն թույլատրելին են, իսկ ֆոնդի ակտիվների փաստացի բաշխումը յուրաքանչյուր տրված իրավիճակում կկատարվի հաշվի առնելով ներդրողների շահերը և ֆոնդի ակտիվների ներդրման սկզբունքները, կառավարչի ֆիդուցիար պարտականությունը ֆոնդի շահառուների նկատմամբ:

6. ՖՈՆԴ ՄՈՒՏՔԱԳՐՎՈՂ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԸ

6.1. Ֆոնդ կուտակային վճարները կատարվում են բացառապես անկանխիկ եղանակով, տարանցիկ հաշվին փոխանցելու միջոցով:

6.2. Ֆոնդ մուտքագրվող Կուտակային վճարների չափը կախված է կենսաթոշակային սխեմայի մասնակցի տեսակից, որոնք կարող են լինել ֆիզիկական անձինք և (կամ) գործատուները:

6.3. Ֆոնդ մուտքագրվող ամսեկան Կուտակային վճարի չափը չի սահմանափակվում, բացառությամբ գործատուի ձեռք բերած կամավոր կենսաթոշակային սխեմայի Մասնակիցների: Ֆիզիկական անձանց դեպքում վճարները կարող են լինել ցանկացած չափի և պարբերականության, կախված վերջիններիս նախապատվություններից, և կամավոր կուտակային վճարի աղբյուր հանդիսացող եկամուտների տեսակից: Ֆիզիկական անձանց դեպքում առանձին պայմանագիր չեն կնքում, վերջիններս հավաստում են կանոններին միանալու իրենց ցանկությունը և Կառավարչի ներքին կանոններին այդ թվում Ռեեստրավարման կանոնակարգին ծանոթ լինելու մասին:

6.4. Գործատուի ձեռք բերած կամավոր կենսաթոշակային սխեմայի Մասնակիցների համար Ֆոնդ մուտքագրվող ամսեկան Կուտակային վճարի չափը, ինչպես նաև այլ պայմանները սահմանվում է պայմանագրով:

6.5. Մեկ ֆիզիկական անձը մյուսի համար վճարում կատարելիս գործում են ֆիզիկական անձի համար նախատեսված պայմանները: Մեկ անձը մյուսի հաշվին կարող է վճարումներ կատարել եթե արդեն բացված է կենսաթոշակային հաշիվ, կամ եթե վճարողը հանդես է գալիս որպես լիազորված անձ:

6.6. Ֆոնդ մուտքագրվող Կուտակային վճարները կատարվում են ՀՀ դրամով:

6.7. Մասնակիցը իր հարկվող եկամտի մեծությունը նվազեցնում է Կուտակային վճարի չափով, սակայն ոչ ավել քան հարկվող եկամտի 5%-ը:

6.8. Գործատուի հաշվին Մասնակիցների համար Ֆոնդ մուտքագրվող Կուտակային վճարները նվազեցվում են գործատուի հարկվող շահույթը որոշելիս յուրաքանչյուր Մասնակցի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների առավելագույնը 5%-ի չափով: Գործատուի և Մասնակցի կողմից կատարվող ընդհանուր նվազեցումը չի կարող գերազանցել տվյալ Մասնակցի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների 5%-ը: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նվազեցումների թույլատրելի չափերի փոփոխության դեպքում, սույն կանոնով նախատեսված չափերը կհամարվեն համապատասխանաբար փոփոխված և կգործեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չափերը:

6.9. Գործատուի հաշվին Մասնակիցների համար Ֆոնդ մուտքագրվող Կուտակային վճարները նվազեցվում են նաև յուրաքանչյուր Մասնակցի համար կատարված Կուտակային վճարի 50%-ի չափով գործատուի հարկվող շահույթը որոշելիս, բայց ոչ ավել, քան յուրաքանչյուր Մասնակցի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների 2.5%-ը: Ընդ որում՝ գործատուի կողմից սույն և 6.8. կետերով սահմանված նվազեցումների չափը չի կարող գերազանցել յուրաքանչյուր Մասնակցի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների 7.5%-ը: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նվազեցումների թույլատրելի չափերի փոփոխության դեպքում, սույն կանոնով նախատեսված չափերը կհամարվեն համապատասխանաբար փոփոխված և կգործեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չափերը:

7. ՓԱՅԵՐԸ ԵՎ ՓԱՅԵՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Փայը համապատասխանում է Մասնակցի Ֆոնդի ակտիվներում ունեցած բաժնեմասին: Փայը չի կարող միաժամանակ պատկանել մի քանի անձանց: Մեկ Մասնակիցը միաժամանակ կարող է ընտրել մեկից ավելի ֆոնդեր: Փայերը չեն հանդիսանում ամուսինների համատեղ սեփականությունը: Փայեր կարող են ձեռք բերել միայն ֆիզիկական անձինք, ինչպես նաև Կառավարիչը կամ անձը, որը օրենսդրության համաձայն հանդես է եկել որպես ֆոնդի կառավարիչ: Ֆոնդի փայերը ժառանգվում են, չեն կարող փոխանցվել կամ առանձնացվել ֆոնդի ակտիվներից:

7.2. Փայը չունի անվանական արժեք: Ֆոնդի առաջին փայը տեղաբաշխելիս յուրաքանչյուր փայի հաշվարկային արժեքը 1000 ՀՀ դրամ է:

7.3. Փայը բաժանելի է: Փայերի բաժանումից առաջացող կոտորակային մասերը կլորացվում են ստորակետից հետո երրորդ նիշի ճշտությամբ: Կլորացումը կատարվում է հետևյալ կանոնների համաձայն՝ NNN.NNN0-ից մինչև NNN.NNN4 թվերը կլորացվում են NNN.NNN-ի, իսկ NNN.NNN5-ից NNN.NNN9 թվերը՝ NNN.NN(N+1)-ի:

7.4. Փայերը հաշվառվում են կենսաթոշակային հաշվում էլեկտրոնային գրառումների տեսքով (փայերը ոչ թղթային են):

7.5. Փայը Մասնակցին Ֆոնդի ակտիվներով իրականացվող գործարքների վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավունք չի տրամադրում: Մասնակիցների ընդհանուր ժողով չի գումարվում, այսինքն՝ Մասնակիցը ժողովների միջոցով չի կարող մասնակցել Ֆոնդի կառավարմանը: Մասնակիցը չի կարող պահանջել Ֆոնդի ակտիվներից իր մասնաբաժնի առանձնացում:

7.6. Մասնակիցներն ստանում են փայերի տիրապետումից բխող հետևյալ իրավունքները՝

(ա) Կանոնների և օրենսդրության համաձայն պահանջել փայերի մարում կամ փոխանակում,

(բ) ժառանգել փայերը,

(գ) մարված փայերի գումարի չափով կամ դրա մի մասով կնքել Անուիտետի պայմանագիր,

(դ) հանդիսանալ իր կողմից տնօրինվող փայերի քանակին համապատասխան Ֆոնդի ակտիվների մասնաբաժնի սեփականատեր,

(ե) Կանոնների համաձայն՝ Ֆոնդի դադարեցման դեպքում ակտիվների մնացորդից ստանալ իր կողմից տնօրինվող փայերի քանակին համապատասխան մասնաբաժինը՝ դրամական տեսքով,

(զ) փոխհատուցում պահանջել Կառավարչից նրա պարտականութույնների խախտման հետևանքով իրեն պատճառված վնասի համար,

(է) Ռեեստրավարից պահանջել իր կողմից տնօրինվող փայերի վերաբերյալ կենսաթոշակային հաշվից քաղվածքի տրամադրում,

(ը) համապատասխան պահանջի ներկայացումից 7 Աշխատանքային օրվա ընթացքում ստանալ տեղեկատվություն Կառավարչի կողմից Ֆոնդում ներառված Արժեթղթերից բխող իրավունքների իրականացման վերաբերյալ,

(թ) էլեկտրոնային փոստի միջոցով անվճար ստանալ 20.1. կետում ներկայացված փաստաթղթերն ու տեղեկատվությունը և տարին մեկ անգամ համապատասխան պահանջի դեպքում անվճար ստանալ 20.1.(ա)-ից 20.1.(թ) ենթակետերում ներկայացված փաստաթղթերի կրկնօրինակները,

(ժ) իրականացնել օրենքով կամ Կանոններով սահմանված այլ գործողություններ:

7.7. Մասնակցի համար փայերով հավաստվող իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում փայերի թողարկման պահից և դադարում են փայերի մարման պահից: Փայը համարվում է թողարկված Ռեեստրում գրանցում կատարելու պահից և համարվում է մարված մասնակիցների Ռեեստրից դուրս գրվելու պահից սկսած: Փայերի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է Ռեեստրում գրառում կատարելու պահից:

7.8. Մասնակիցը փայերով ամրագրված իրավունքները պետք է իրականացնի բարեխղճորեն և օրենսդրությանը ու Կանոններին համապատասխան:

7.9. Մասնակիցն անձամբ պատասխանատու չէ Կառավարչի կողմից Ֆոնդի անունից ստանձնած պարտավորությունների համար, ինչպես նաև այն պարտավորությունների համար, որոնց կատարումը Կառավարիչը իրավունք ունի պահանջել Ֆոնդից Կանոններին համապատասխան: Նման պարտավորությունների կատարման համար Մասնակցի պատասխանատվությունը սահմանափակվում է Ֆոնդի ակտիվներում Մասնակցի ունեցած բաժնեմասով:

7.10. Կառավարիչը չի կարող ստանձնել պարտավորություններ Մասնակիցների անունից: Մասնակցի նկատմամբ պահանջների բավարարման համար պահանջվող վճարները կարող են կատարվել Մասնակցի փայերի հաշվին, սակայն ոչ Ֆոնդի ակտիվների հաշվին:

8. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

8.1. Դրամական միջոցների և բանկային ավանդների գնահատման կանոններն. են

(ա) դրամական միջոցների և բանկային ավանդների արժեքը որոշվում է դրանց անվանական արժեքով,

(բ) ավանդների համար հաշվարկված, սակայն դեռևս չստացված տոկոսները հաշվառվում են որպես հաշվեգրված եկամուտ գնահատման օրվա դրությամբ:

8.2. Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված Արժեթղթերի գնահատումը իրականացվում է հետևյալ կերպ.

(ա) Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված Արժեթուղթը գնահատվում է գնահատման օրը տվյալ Արժեթղթի փակման գնով, եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոններով,

(բ) Եթե Արժեթղթի համար վերոնշյալ 8.2.(ա) կետով սահմանված փակման գինը հասանելի չէ (առկա չէ), ապա այդ Արժեթուղթը գնահատվում է տվյալ շուկայում գնահատման օրը առևտրային նստաշրջանի փակման պահի դրությամբ գնման հայտերում նշված ամենաբարձր և վաճառքի հայտերում նշված ամենացածր գների միջին թվաբանականով:

(գ) Եթե Արժեթղթի համար փակման գինը և 8.2.(բ) կետով սահմանված գները հասանելի չեն (առկա չեն), ապա այդ Արժեթուղթը գնահատվում է դրա՝ գնահատման օրվան նախորդող վերջին հայտնի համապատասխան գնով, որը որոշվել է 8.2.(ա) և 8.2.(բ) կետերով սահմանված հաջորդականությամբ, բացառությամբ 8.2.(զ) կետով նախատեսված դեպքերի:

(դ) Եթե 8.2.(գ) կետով սահմանված վերջին գործարքի կամ վերջին հայտնի գնի ամսաթվից հետո տեղի է ունեցել տվյալ Արժեթղթի կամ թողարկողի հետ կապված որևէ էական իրադարձություն կամ ի հայտ է եկել որևէ էական փաստ կամ տեղեկություն, որը կարող է էապես ազդել տվյալ Արժեթղթի գնի վրա, ապա այդ կետերի համաձայն որոշված գինը կարող է համապատասխանաբար ճշգրտվել Կառավարչի կողմից տվյալ Արժեթղթի շուկայական արժեքի գնահատման համար:

(ե) Եթե սույն Կանոնների 8.2.(ա)-ից 8.2.(գ) կետերով սահմանված գները հասանելի չեն (առկա չեն) գնահատման օրվա դրությամբ վերջին 30 աշխատանքային օրերից ոչ մեկի համար, ապա կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված Արժեթղթի արժեքը որոշվում է 8.2.(զ) կետով սահմանված կարգով:

(զ) 8.2.(դ) և 8.2.(ե) կետերում նախատեսված դեպքերում Արժեթուղթը գնահատվում է դրա հնարավոր վաճառքի ողջամիտ գնով, որը որոշվել է բարեխղճորեն, ֆինանսների ոլորտում համընդհանուր ընդունված մեթոդների կիրառմամբ՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով տվյալ Արժեթղթի ցածր իրացվելիության համար նվազեցումը: Այս գնահատումը կառավարիչը

վերանայում է առնվազն մեկ անգամ 30 աշխատանքային օրվա ընթացքում: Արժեթղթերի համար վերոնշյալ մեթոդները ներառում են հետևյալ մեթոդները, բայց չեն սահմանափակվում միայն դրանցով՝ յուրաքանչյուր Արժեթղթի տեսակի համար թվարկված ըստ իրենց կիրառության առաջնայնության՝

(Ա) ոչ պետական Արժեթղթերի համար՝

(1) Ոչ պետական Արժեթղթերի շուկա ստեղծողի կողմից առաջարկվող գնման հայտում նշված եկամտաբերությունը:

(2) Ոչ պետական Արժեթղթերի համար կիրառվում է կարգավորվող շուկայում շրջանառվող պետական պարտատոմսերի եկամտաբերությունը, որին ավելացվում է նաև համապատասխան սպրեդ:

(3) ՀՀ ոչ պետական Արժեթղթերի համար, բացի վերոնշյալ մեթոդներից, կիրառվում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված կորպորատիվ Արժեթղթերի գները:

(Բ) Կարգավորվող շուկայում չշրջանառվող ՀՀ Պետական Պարտատոմսերի գնահատումն իրականացվում է Կենտրոնական Բանկի հրապարակած եկամտաբերության կորի հիման վրա:

8.3. Այլ ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) գնահատումը իրականացվում է հետևյալ կանոններով՝

(ա) Այլ ֆոնդերի փայերը (բաժնետոմսերը) գնահատվում են գնահատման օրվա դրությամբ դրանց վերջին հրապարակված հաշվարկային արժեքով, եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոններով:

(բ) Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված Ներդրումային Ֆոնդերի փայերի արժեքը որոշվում է հետևյալ արժեքներից նրանով, որն ավելի ուշ է տեղի ունեցել՝

(Ա) տվյալ Ֆոնդի փայի (բաժնետոմսի) վերջին հրապարակված հաշվարկային արժեքով,

(Բ) գնահատման օրվա դրությամբ տվյալ Ֆոնդի փայի (բաժնետոմսի) վերջին հայտնի փակման գնով:

(գ) Ոչ հրապարակային Ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) արժեքը որոշվում է 8.2.(զ) կետի համաձայն:

8.4. Աճանցյալ գործիքների գնահատումը իրականացվում է հետևյալ կանոններով՝

(ա) Ստանդարտացված (Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված) Աճանցյալ գործիքի արժեքը որոշվում է 8.2.(ա)-ից 8.2.(գ) կետերին համապատասխան:

(բ) Ոչ ստանդարտացված Աճանցյալ գործիքների գնահատումն իրականացվում է բաց դիրքի (երկար կամ կարճ) սպասվող շահույթների (վնասների) հիման վրա: Վերջինս որոշվում է Աճանցյալ գործիքի հիմքում ընկած բազիսային ակտիվի գնահատման միջոցով, որն իրականացվում է 8.2. կետով սահմանված հաջորդականությամբ:

8.5. Ժամկետանց Արժեթղթերի եվ դեբիտորական պարտքերի գնահատումը իրականացվում է հետևյալ կանոններով՝

(ա) Եթե թողարկողը չի կատարում պարտքային արժեթղթի գծով իր պարտավորությունները (այդ թվում՝ արժեթղթի մարում, մասնակի մարում, արժեկտրոնի վճարում), ապա տվյալ պարտքային արժեթղթի գծով ստացվելիք գումարների գնահատման ժամանակ դրանք նվազեցվում են վճարման նախատեսված օրվան հաջորդող՝

(Ա) 90 օրվա ընթացքում 10 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով հավասարաչափ գումարի տեսքով,

(Բ) 91 օրից 180 օրվա ընթացքում 10 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով հավասարաչափ գումարի տեսքով,

(Գ) 181 օրից 270 օրվա ընթացքում 30 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով հավասարաչափ գումարի տեսքով,

(Դ) 271 օրից 360 օրվա ընթացքում մնացած 50 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով հավասարաչափ գումարի տեսքով:

(բ) Ժամկետանց դեբիտորական պարտքերի գնահատումն իրականացվում է վերոնշյալ 8.5.(ա) կետին համապատասխան:

8.6. Ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների արժեքը որոշվում է համաձայն ՖՀՄՍ կանոնների:

8.7. Ֆոնդի ակտիվների գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր Աշխատանքային օր: Տվյալ օրվա համար Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկելիս, հիմք է ընդունվում հաջորդ օրվա ժամը 05:00 դրությամբ հասանելի տեղեկատվությունը:

8.8. Ակտիվների գնահատում իրականացնելիս, հիմք է ընդունվում այն կարգավորվող շուկայի գները, որտեղից ի սկզբանե գնվել է տվյալ Արժեթուղթը:

9. ՓԱՅԵՐԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

9.1. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկը պետք է իրականացվի Կառավարչի ներքին Կանոնների և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կանոններին համապատասխան: Ֆոնդի և փայի զուտ ակտիվների արժեքը պետք է հաշվարկվի ՀՀ դրամով: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը որոշվում է Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքի հիման վրա՝ դրանցից Ֆոնդի ստանձնած պարտավորությունները

(պահանջները) նվազեցնելու միջոցով: Նշված պարտավորությունների (պահանջների) սպառիչ ցանկը հետևյալն է՝

(ա) Կառավարչի պարգևավճարը,

(բ) Պահառուի պարգևավճարը,

(գ) Փայերի փոխանակման արդյունքում այլ կենսաթոշակային ֆոնդերին վճարման ենթակա գումարները,

(դ) Ֆոնդի կողմից Մասնակիցներին վճարման ենթակա գումարները ներկայացված մարման պահանջների մասով,

(ե) Ֆոնդի ակտիվներով գործարքների իրականացման հետ ուղղակիորեն կապված ծախսերը, այդ թվում՝ բրոքերային միջնորդավճարները և գործարքների իրականացման հետ կապված այլ վճարները (միջնորդավճարները), ներդրումային առաջարկների և հետազոտությունների ձեռքբերման ծախսերը, բանկային փոխանցումների և հաշվարկների իրականացման գծով վճարները,

(զ) Ֆոնդի հաշվին ներգրավված վարկերի (փոխառությունների) գումարը,

(է) Ֆոնդի հաշվին ներգրավված վարկերի (փոխառությունների) գծով վճարվելիք տոկոսները, ռեպո և հակադարձ ռեպո գործարքների գծով վճարվելիք տոկոսները,

(ը) Ֆոնդի ակտիվների հաշվին վճարման ենթակա պարտադիր վճարները,

(թ) Ֆոնդի հաշվետվությունների աուդիտի հետ կապված ծախսերը,

(ժ) իրավբանական ծախսեր, որոնք ներառում են նոր ներդրումների իրականացման հետ կապված իրավաբանական ուսումնասիրության արդյունքում տրամադրվող իրավաբանական եզրակացության հետ կապված ծախսերը, դատական ծախսերը և կարգավորող ակտերին համապատասխանության հետ կապված ծախսերը:

9.2. Ֆոնդի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի հետ կապված ծախսերը նվազեցվում են Ֆոնդի ակտիվներից Ֆոնդի գործունեության երկրորդ տարվանից սկսած: Ֆոնդի առաջին ֆինանսական տարվա հաշվետվությունների աուդիտի ծախսերը կրում է Կառավարիչը:

9.3. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկելուց հետո որևէ էական իրադարձության կամ հանգամանքի տեղի ունենալու կամ ի հայտ գալու դեպքում, որը Կառավարչի լավագույն մասնագիտական կարծիքով էականորեն ազդում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի վրա, Կառավարիչը կարող է վերագնահատել Ֆոնդի կամ փայի հաշվարկված զուտ ակտիվների արժեքը, եթե վերագնահատման չիրականացմամբ կվնասվեին Մասնակիցների շահերը:

9.4. Փայի հաշվարկային արժեքը հավասար է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի և գնահատման պահի դրությամբ թողարկված և չմարված փայերի քանակի հարաբերությանը:

9.5. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, փայի հաշվարկային արժեքը և Մարման ու Թողարկման գները հաշվարկվում և հրապարակվում են առնվազն յուրաքանչյուր Աշխատանքային օր մինչև ժամը 12:00-ն: Փայի հաշվարկային արժեքը և Թողարկման ու Մարման գները կլորացվում են ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ: Կառավարչի կողմից պահվում է փայերի Մարման վճարը:

9.6. Ֆոնդի եկամուտները չեն բաշխվում Մասնակիցների միջև և վերաներդրվում են: Ֆոնդի շահույթը (վնասը) արտացոլվում է փայի հաշվարկային արժեքի փոփոխությամբ:

9.7. Ֆոնդի եկամտաբերությունը հաշվարկվում և հրապարակվում է «Կենսաթոշակային ֆոնդի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը եվ եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ի համաձայն:

9.8. Ֆոնդի եկամտաբերության և Կառավարչի կառավարման արդյունավետությունը համեմատականորեն գնահատելու նպատակով մասնակցիները կարող են այն համեմատել իրենց տեսանկյունից առավել հարմար այլ ֆինանսական գործիքի եկամտաբերության հետ: Կառավարիչը սկսած Ֆոնդի ստեղծման պահից երեք տարի հետո, կկառուցի և կներկայացնի ուղենիշ, որի հիման վրա մասնակիցները հնարավորություն կունենան գնահատելու Ֆոնդի եկամտաբերության մակարդակը ի համեմատ ուղենիշի և գնահատելու կառավարման արդյունավետությունը:

9.9. Ուղենիշը կառուցվելու է հիմք ընդունելով ակտիվների տարբեր խմբերի համար ռիսկի, եկամտաբերության, ժամկետայնության առումով համեմատական գործիքները/ինդեքսները/շուկայական ցուցանիշները (ցուցանիշներ): Այսինքն ընտրվելու է շուկայական ցուցանիշ, որի համեմատ գնահատվելու է ակտիվների տվյալ խումբը: Ուղենիշը հաշվարկվելու է ակտիվների յուրաքանչյուր խմբի համար ընտրված ցուցանիշի կշռված միջինով: Ակտիվների յուրաքանչյուր խմբի (պետական պարտատոմսեր, կորպորատիվ պարտատոմսեր, ավանդներ, հայկական բաժնետոմսեր, արտասահմանյան բաժնետոմսեր) համար օգտագործվող կշիռները կհաշվարկվեն հիմք ընդունելով երեք տարիների ընթացքում Ֆոնդի ակտիվների կառուցվածքը: Ավելի մանրամասն մեթոդաբանությունը ինչպես նաև կշիռների հաշվարկը կներակայացվի սույն կետում նշված ժամկետում Կառավարչի ինտերնետային կայքում, իսկ դրան հաջորդող տարվանից սկսված կհրապարակվի նաև հաշվարկված ուղենիշը:

10. ՖՈՆԴԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

10.1. Ֆոնդի հաշվապահական հաշվառումը վարվում է և ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ՆՖՄ, ԿԿՄ, ԱՇՄ, ՀՀՄ, ՖՀՄՍ և Կենտրոնական Բանկի կողմից ընդունված՝ ֆոնդերի հաշվապահական հաշվառմանը և հաշվետվությունների կազմմանը վերաբերող իրավական ակտերին համապատասխան:

10.2. Հաշվետու ժամանակաշրջան է համարվում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամանակաշրջանը՝ հաշվետու տարին (օրացուցային տարի), հաշվետու եռամսյակը (օրացուցային եռամսյակ) և հաշվետու օրը (Աշխատանքային օր), իսկ օրենքներով կամ Կենտրոնական Բանկի իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև ամիսը կամ շաբաթը:

10.3. Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը Ֆոնդի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ճանաչի միայն այն դեպքում, երբ Ֆոնդը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

10.4. Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է իր իրական արժեքով: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառվում սկզբնական չափման մեջ, այլ՝ ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում:

10.5. Բանկային ավանդները, տրամադրած և ստացած փոխառությունները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

10.6. «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով: Իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

10.7. Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», եթե կենտրոնական բանկի իրավական ակտերով այլ բան սահմանված չէ:

10.8. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումն իրականացվում է «Ֆինանսական գործիքներ. Ճանաչումն ու չափումը» ՀՀՄՍ 39-ին համապատասխան: «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ը վաղաժամ չի կիրառվում:

10.9. Տոկոսային եկամուտը, ներառյալ «իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը ճանաչվում (հաշվեգրում) է ժամանակային համամասնության հիմունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որն այն դրույքն է, որը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետի ընթացքում գնահատված ապագա դրամական ներհոսքերը ճշգրիտ կերպով զեղչում է մինչև այդ ակտիվի հաշվեկշռային արժեքը:

10.10. Կառավարչի պարգևավճարը հաշվարկվում և ճանաչվում է սույն Կանոններին համապատասխան:

10.11. Պահառուի պարգևավճարը հաշվարկվում և ճանաչվում է սույն Կանոններին համապատասխան: Պահառուական ծառայությունների հետ կապված սույն Կանոններով սահմանված բոլոր ծախսերը ճանաչվում են կատարման օրվա դրությամբ փաստացի ծախսի չափով:

10.12. Ֆոնդի հաշվին կատավող ծախսերը Ֆոնդի կանոններով սահմանված առավելագույն չափը գերազանցելու դեպքում, գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ՝ պահանջ Կառավարչի նկատմամբ: Յուրաքանչյուր հաջորդ օր, եթե այն նվազում է, համապատասխանաբար նվազում է նաև այդ ակտիվը, իսկ երբ ծախսերը հավասարվում կամ նվազում են սահմանված տոկոսից, ապա այդ ակտիվը զրոյացվում է:

10.13. Ֆոնդի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է, իսկ ցանկացած այլ արժույթ դիտարկվում է որպես արտարժույթ: Արտարժույթով գործարքները փոխարկվում են ՀՀ դրամի՝ գործարքի օրվա արտարժույթի սփոթ փոխարժեքով: Սփոթ փոխարժեքը ՀՀ դրամով գնահատման օրվա դրությամբ համապատասխան կարգավորվող շուկայում տվյալ արտարժույթով վերջին գործարքի գինն է, իսկ դրա բացակայության դեպքում՝ տվյալ արտարժույթի համար գնահատման օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած հաշվարկային փոխարժեքն է:

10.14. Արտարժույթով ներկայացված դրամային ակտիվները և դրամային պարտավորությունները հաշվետու ամսաթվի դրությամբ փոխարկվում են ՀՀ դրամի՝ սփոթ փոխարժեքով:

10.15. Արտարժույթով ներկայացված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են ՀՀ դրամի՝ իրական արժեքի որոշման օրվա սփոթ փոխարժեքով:

10.16. Փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ և ներկայացվում որպես զուտ փոխարժեքային օգուտ կամ կորուստ, բացառությամբ «իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնք ներկայացվում են որպես «իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտի մաս:

11. ՓԱՅԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԳՆԵՐԸ

11.1. Ներդրողը կամ Մասնակիցը, գործարքներ իրականացնելիս Կառավարչին ներկայացնում են (1) Ձեռքբերման հայտ, (2) Մարման հայտ կամ (3) Փոխանակման հայտ, (4) Ժառանգության դիմում, ինչպես նաև այլ հայտեր և դիմումներ՝ համաձայն Ռեեստրավարման կանոնակարգի:

11.2. Տվյալ Աշխատանքային օրվա մինչև ժամը 18:00-ն ներկայացված հայտերի համար հաշվարկային օր է համարվում հաջորդ Աշխատանքային օրը (հաշվարկներում հիմք են ընդունվում հաջորդ Աշխատանքային օրը հրապարակված Թողարկման և Մարման գները): Եթե հայտը ներկայացված է, սակայն փայի դիմաց վճարումը կատարված չէ, ապա տվյալ Աշխատանքային օրվա մինչև ժամը 18:00 կատարված վճարումների դեպքում տվյալ հայտի համար հաշվարկային օր է համարվում հաջորդ Աշխատանքային օրը:

11.3. Մասնակիցն իրավունք չունի չեղյալ համարել կամ փոփոխություններ կատարել Ձեռքբերման, Հետգնման կամ Փոխանակման հայտերում դրանք հանձնելուց հետո: Ձեռքբերման, Հետգնման կամ Փոխանակման հայտ ներկայացրած ներդրողը պետք է ապահովի գործարքի կատարման համար անհրաժեշտ պայմանների ժամանակին իրականացումը: Փայերի Ձեռքբերման ժամանակ Մասնակիցը վճարման ենթակա գումարը սահմանված ժամկետում փոխանցում է Տարանցիկ հաշվին: Մասնակցի կողմից իր պարտավորությունների չկատարման դեպքում Կառավարիչը կարող է օգտագործել օրենսդրությամբ սահմանված ցանկացած օրինական միջոց՝ ներառյալ գործարքի չեղյալ հայտարարումը, ինչպես նաև Մասնակցի կողմից Ֆոնդին կամ մյուս Մասնակիցներին պատճառված վնասների փոխհատուցման պահանջի ներկայացումը:

11.4. Փայերը թողարկվում են դրա Ձեռքբերման հայտ ներկայացվելու (սակայն ոչ շուտ, քան փայի դիմաց վճարումն ստանալու) օրվան հաջորդող առաջին Աշխատանքային օրվա մինչև ժամը 13:00-ն հրապարակված Թողարկման գնով: Ֆոնդի փայերը թողարկելիս Կառավարչի կողմից որևէ թողարկման վճար չի գանձվում:

11.5. Փայերը մարվում են դրանց մարման հայտ ներկայացվելու օրվան հաջորդող առաջին Աշխատանքային օրվա մինչև ժամը 13:00-ն հրապարակված Մարման գնով:

12. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

12.1. Փայերը թողարկվում են Կառավարչի կողմից: Փայերը թողարկվում են հրապարակային առաջարկի միջոցով: Փայերը թողարկումը շարունակական է, և թողարկման ծավալն ու թողարկվող փայերի քանակը ֆիքսված չեն:

12.2. Փայերը թողարկվում են ներդրմանը համապատասխան դրամական միջոցները Ֆոնդի տարանցիկ հաշվին փոխանցվելու դեպքում: Թողարկվող փայերի քանակը որոշվում է ներդրման համար վճարված գումարի և Թողարկման գնի հարաբերությամբ:

12.3. Ձեռքբերման հայտը ներառում է Ֆոնդի ընտրության դիմումը ներառում է Մասնակցի անհատական տվյալների, կոնտակտային տվյալների, տեղեկատվություն ստանալու նախընտրելի միջոցների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը, որի ամբողջական ցանկը սահմանված է Ռեեստրավարման Կանոնակարգով:

12.4. Փայերի Ձեռքբերման հայտի ներկայացմամբ Մասնակիցը պարտավորվում է կամավոր Կուտակային վճարներ կատարել օրենսդրությամբ սահմանված պայմաններին և գործընթացներին համապատասխան և համաձայնվում է սույն Կանոններին:

12.5. Գործատուն կամ օրենսդրությամբ սահմանված այլ անձը Մասնակցի նկատմամբ ստանձնում է վարձատրության և Կուտակային վճարները Տարանցիկ հաշվին փոխանցելու պարտավորություն:

12.6. Կուտակային վճարները և դրանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալով՝ Ռեեստրավարը Թողարկման գնի հիման վրա հաշվարկում է Մասնակցի համար թողարկվող փայերի քանակը, որոնք էլ արտացոլվում են Մասնակցի կենսաթոշակային հաշվում: Կուտակային վճարի չափով ամբողջական փայերի ձեռքբերման անհնարինության դեպքում համապատասխան կոտորակային մասը

գրանցվում է Մասնակցի կենսաթոշակային հաշվում:

12.7. Տարանցիկ հաշվին փոխանցված գումարները ետ են ուղարկվում, եթե

(ա) համապատասխան հայտը կամ տեղեկատվությունը չի ուղարկվել Կառավարչին, փոխանցումը ստանալուց առնվազն 10 օրվա ընթացքում,

(բ) հայտում կամ փոխանցման հանձնարարականում անձին նույնականացնող տվյալները կամ Ռեեստրավարման կանոնակարգում նշված այլ տվյալները սխալ են կամ բացակայում են:

13. ՓԱՅԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

13.1. Մասնակիցն իրավունք ունի ցանկացած պահի փայերը փոխանակել այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերով, բացառությամբ Գործատուի ձեռք բերած կամավոր կենսաթոշակային սխեմայի Մասնակիցների: Փայերի փոխանակման նպատակով Մասնակիցը Կառավարչին է ներկայացնում օրենսդրությամբ սահմանված տեղեկատվությունը պարունակող Փոխանակման դիմում:

13.2. Գործատուի ձեռք բերած կամավոր կենսաթոշակային սխեմայի Մասնակիցները փայերը այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու իրավունք են ձեռք բերում միայն հետևյալ դեպքերում՝

(ա) գործատուի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելուց հետո,

(բ) գործատուի եւ Ֆոնդի (Կառավարչի) միջեւ կնքված համապատասխան պայմանագիրը լուծվելուց հետո.

(գ) գործատուի լուծարվելուց հետո:

13.3. Փոխանակման եթակա Ֆոնդի բոլոր փայերը փոխանակվում են միաժամանակ:

13.4. X փայը Y փայերի փոխանակելիս նոր թողարկվող Y փայերի քանակը որոշվում է հետևյալ կերպ՝

$$Q_{new} = Q \times \frac{\mathrm{NAV}(X)}{\mathrm{NAV}(Y)} \times (1 - ExFee(X, Y)),$$

որտեղ Q_{new}-ն փոխանակման ժամանակ նոր թողարկվող Y փայերի քանակն է, Q-ն փոխանակվող X փայերի քանակն է, $\mathrm{NAV}(X)$ և $\mathrm{NAV}(Y)$-ը համապատասխանաբար X և Y փայերի հաշվարկային արժքեներն են, $ExFee$-ն՝ Մարման վճարն է: Մարման վճար չի գանձվում Մասնակցի կողմից Ֆոնդի փայերը Կառավարչի այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում:

13.5. Փոխանակվող X փայերի համար հաշվարկային օրը որոշվում է Փոխանակման հայտի ներկայացման ժամով, իսկ նոր Y փայերի թողարկման համար հաշվարկային օրը որոշվում է Ռեեստրավարի կողմից գումարը Ֆոնդից այլ ֆոնդի փոխանցման հանձնարարականի տրամադրման ժամով (կիրառվում են փայերի մարման կամ թողարկման համար սույն Կանոններով սահմանված հայտերի ընդունման ժամկետներն

ու համապատասխան ընթացակարգը):

13.6. Փայերի փոխանակման ժամանակ Մասնակիցներին որևէ վճարում չի կատարվում: Փայերը այլ կառավարչի կողմից կառավարվող ֆոնդի փայերով փոխանակելիս փոխանակվող փայերի քանակին և Մարման գնին համապատասխան դրամական միջոցները փոխանցվում են համապատասխան ֆոնդի կանոններով սահմանված պահառուի բանկային հաշվին փայերի փոխանակումն իրականացնելու համար:

14. ՓԱՅԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

14.1. Փայերի մարումն իրականացվում է դրանց հետգնմամբ: Փայերը մարելու համար Մասնակիցը Կառավարչին Մարման հայտ է ներկայացնում: Մասնակցին վճարման ենթակա գումարը վճարվում են Ֆոնդի ակտիվներից: Վերջինս որոշվում է մարված փայերի քանակի և Մարման գնի արտադրյալով: Մարված փայերի գումարը վճարվում է ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ: Փայերի մարումն իրականացնելու օրը (հաշվարկային օրը) մարված փայերը դուրս են գրվում Ռեեստրից և դրանցով սահմանվող իրավունքներն ու պարտականությունները դադարում են: Փայերը մարվում են ոչ ուշ, քան Մարման հայտն ընդունելու օրվան հաջորդող երրորդ Աշխատանքային օրը, բացառությամբ փայերի մարման կասեցման դեպքի: Արդեն մարված փայերի համար վճարումը կատարվում է անկախ կասեցման փաստից:

14.2. Նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը Մասնակիցն իրավունք ունի ներկայացնելու իր կուտակած միջոցները միանվագ վճարելու պահանջ, եթե տվյալ Մասնակցի կողմից Ֆոնդին առաջին Կուտակային վճարի կատարման օրվանից անցել է առնվազն երկու տարի և առկա է հետևյալ երկու դեպքերից որևէ մեկը՝

(ա) գործատուի հետ աշխատանքային պայմանագրի լուծում, կամ

(բ) Գործատուի լուծարում:

Այս դեպքում Մասնակցից կարող է գանձվել 14.6. կետով սահմանված Մարման վճար:

14.3. Նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը Մասնակիցն իրավունք ունի միանվագ վճարի ձևով ստանալու իր միջոցները հետևյալ դեպքերում՝ առանց 14.6. կետով սահմանված Մարման վճար վճարելու, եթե Ֆոնդին առաջին Կուտակային վճարի կատարման օրվանից չի անցել երկու տարի՝

(ա) անձին օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչելու դեպքում,

(բ) մասնակցի ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու և կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով հիվանդ լինելու դեպքում, որը հավաստվում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի տված եզրակացությամբ,

(գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ մշտական բնակության նպատակով արտասահման մեկնելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելու դեպքում,

(դ) Հայաստանում աշխատող օտարերկրացիների՝ իրենց մշտական բնակության երկիր վերադառնալու դեպքում,

(ե) Ֆոնդի դադարեցման դեպքում:

14.4. Նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը Մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ ներկայացնելու իր կուտակած միջոցները միանվագ վճարելու պահանջ, եթե տվյալ մասնակցի կողմից Ֆոնդին առաջին Կուտակային վճարի կատարման օրվանից անցել է առնվազն երկու տարի՝ Կառավարչին վճարելով 14.6. կետով սահմանված Մարման վճար:

14.5. Նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակիցն իրավունք ունի միանվագ վճարի ձևով ստանալու իր միջոցները հետևյալ դեպքերում՝ առանց 14.6. կետով սահմանված Մարման վճար վճարելու, եթե Ֆոնդին առաջին Կուտակային վճարի կատարման օրվանից անցել է առնվազն երկու տարի (բացառությամբ (զ) ենթակետի)՝

(ա) անձին օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչելու դեպքում,

(բ) մասնակցի ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու և կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով հիվանդ լինելու դեպքում, որը հավաստվում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի տված եզրակացությամբ,

(գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ մշտական բնակության նպատակով արտասահման մեկնելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելու դեպքում,

(դ) Հայաստանում աշխատող օտարերկրացիների՝ իրենց մշտական բնակության երկիր վերադառնալու դեպքում,

(ե) Ֆոնդի դադարեցման դեպքում,

(զ) այն դեպքում, երբ Ֆոնդին առաջին կուտակային վճարի կատարման օրվանից անցել է ավելի քան տասը տարի:

14.6. Ֆոնդի փայերը մարելիս Մարման վճար չի գանձվում ԿԿՄ սահմանված կարգով կենսաթոշակի անցնելիս կուտակված միջոցները Անուիտետի, Ժամկետային պարբերական վճարի կամ Միանվագ վճարի տեսքով ստանալու (փայերի ամբողջությամբ կամ մի մասը մարելու միջոցով), ինչպես նաև Մասնակցի կողմից Ֆոնդի փայերը Կառավարչի այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու և Ֆոնդի դադարեցման դեպքերում: Մարման վճարը վճարվում է փայերը մարող Մասնակցի հաշվին: Կառավարիչը ցանկացած պահի իր հայեցողությամբ կարող

է որոշում կայացնել Մարման վճարից հրաժարվելու կամ այն նվազեցնելու վերաբերյալ: Մարման վճարի չափը փայի հաշվարկային արժեքի 1%-ն է:

14.7. Կամավոր կուտակային կենսաթոշակ ստանալու նպատակով Մասնակիցն իրավունք ունի Ապահովագրական ընկերության հետ կնքել Անուիտետի պայմանագիր կամ դիմում ներկայացնել սույն Կանոններով և ԿԿՄ-ով սահմանված կարգով Ժամկետային պարբերական վճարի կամ Միանվագ վճարի տեսքով Ֆոնդից ստանալու համար:

14.8. Կամավոր կուտակային կենսաթոշակ ստանալու նպատակով Ֆոնդից ստացվող Միանվագ վճարը, ինչպես նաև սույն Կանոնների 14.1., 14.2. և 14.3. կետերով սահմանված կարգով նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը միանվագ ստացված վճարները հարկվում են ԵՀՄ ՀՀ օրենքի համաձայն հետևյալ դրույքաչափերով՝

Միանվագ վճարի չափը	Հարկի գումարը
Մինչև 120,000 դրամ	Միանվագ վճարի 24.4 տոկոսը
120,000-2,000,000 դրամ	29,280 դրամին գումարած 120,000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը
2,000,000 դրամից ավելի	518,080 դրամին գումարած 2,000,000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը

14.9. Անուիտետի կամ ժամկետային պարբերական վճարի տեսքով ստացված կամավոր կուտակային կենսաթոշակները հարկվում են 10% դրույքաչափով՝ ԵՀՄ ՀՀ օրենքի համաձայն:

14.10. Կամավոր կուտակային կենսաթոշակ ստանալու համար Մասնակիցն Ապահովագրական ընկերության հետ կնքում է Անուիտետի պայմանագիր: Անուիտետի պայմանագիր կնքելու նպատակով Մասնակիցն ընտրում է Ապահովագրական ընկերություն և դիմում է ներկայացնում Կառավարչին փայերի մարման ու համապատասխան գումարն Ապահովագրական ընկերության հաշվեհամարին փոխանցելու համար Մասնակցի կողմից տրամադրված ինֆորմացիայի հիման վրա:

14.11. Անուիտետի պայմանագիր կնքելիս Մասնակցի կողմից տնօրինվող բոլոր փայերը մարվում են:

14.12. Մասնակիցը, Ժամկետային պարբերական վճարի տարբերակն ընտրելով, Ֆոնդից կուտակային կենսաթոշակներ ստանալու իրավունք է ձեռքբերում:

14.13. Ժամկետային պարբերական վճարների տեսքով կենսաթոշակի վճարման համար մարվող Ֆոնդի փայերը եռամսյակային կտրվածով չեն կարող գերազանցել առաջին պարբերական վճարը կատարելու պահին Մասնակցին պատկանող Ֆոնդի փայերի 10 տոկոսը, իսկ պարբերական վճարների կատարման ժամկետը չի կարող պակաս լինել 3 տարուց:

14.14. Փայերը մարելու նպատակով մասնակիցը Ռեեստրավարի միջոցով Կառավարչին մարման հայտ է ներկայացնում: Մարման հայտ կարող է ներկայացվել ցանկացած Աշխատանքային օր: Փայերը մարվում են դրանց մարման հայտ ներկայացվելու օրվան հաջորդող առաջին Աշխատանքային օրվա մինչև ժամը 13:00-ն հրապարակված Մարման գնով: Մարման արդյունքում Մասնակցին վճարվող գումարը հաշվարկվում է Մասնակցի կողմից ներկայացված մարման հայտում նշված մարվող փայերի քանակի և փայի Մարման գնի արտադրյալով: Փայերը մարվում են ոչ ուշ, քան Ռեեստրավարի կողմից մարման հայտն ընդունելու օրվան հաջորդող երրորդ Աշխատանքային օրը, բացառությամբ փայերի մարման կասեցման դեպքի:

14.15. Ժամկետային պարբերական վճարներով վճարումների կատարումը դադարում է Մասնակցի մահվան կամ հաշվի վրա առկա փայերի սպառման դեպքում:

14.16. Մասնակիցը, միանվագ վճարի տարբերակն ընտրելով, իրավունք ունի բոլոր փայերի մարման և համապատասխան գումարի միանգամից վճարման պահանջ ներկայացնել:

14.17. Միանվագ վճարի ստացման դիմում ներկայացնելուց հետո, բայց նախքան միանվագ վճարի կատարումը, Մասնակցի կողմից լրացուցիչ փայերի ձեռքբերման դեպքում Մասնակցի կողմից տնօրինվող բոլոր փայերը մարվում և միանվագ վճարվում են Մասնակցին:

14.18. Միանվագ վճարը ստանալու նպատակով Մասնակիցն առաջնորդվում է 14.1. կետով սահմանված գործընթացներով: Պահառուն կազմակերպում է փայերի մարումն ու գումարի վճարումը:

14.19. Փայերի մարումը կարող է կասեցվել Կառավարչի որոշման հիման վրա կամ Կենտրոնական բանկի պահանջով:

14.20. Կառավարիչը կարող է կասեցնել Ֆոնդի փայերի մարումը առավելագույնը 3 ամիս ժամկետով հետևյալ հիմքերից որևէ մեկով, եթե այլ բան սահմանված չէ ՆՖՄ-ով և (կամ) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով՝

(ա) եթե Ֆոնդի կանոնավոր կառավարումը կարող է տուժել փայերի մարման հետևանքով կատարվող վճարման արդյունքում, կամ

(բ) եթե Ֆոնդի Արժեթղթերը կամ այլ ակտիվները չեն կարող ողջամիտ պայմաններով արագորեն վաճառվել առանց Ֆոնդին և Մասնակիցներին վնաս պատճառելու, կամ

(գ) եթե դրանով այլ Մասնակիցների շահերը էականորեն կվնասվեն:

14.21. Կառավարիչը նախապես տեղեկացնում է Կենտրոնական Բանկին և Պահառուին փայերի մարման կասեցման և դրա պատճառների վերաբերյալ:

14.22. Կենտրոնական բանկի պահանջով Կառավարիչը պարտավոր է կասեցնել փայերի մարումը, եթե դա անհրաժեշտ է Մասնակիցների օրինական շահերը պաշտպանելու համար:

14.23. Կառավարիչը հայտարարություն է հրապարակում փայերի մարման կասեցման վերաբերյալ առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում և իր ինտերնետային տնային էջում: Փայերի թողարկում կամ մարում չի կարող իրականացվել այն ժամանակահատվածում, որի ընթացքում Ֆոնդի փայերի մարումը կասեցված է:

15. ՓԱՅԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒՄԸ

15.1. Ֆոնդի փայերը ժառանգվում են:

15.2. Ֆոնդի փայերը ժառանգի ընտրությամբ.

(ա) փոխանակվում են վերջինիս կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերով,

(բ) մարվում են և մարման արդյունքում ձևավորված դրամական միջոցները միանվագ վճարի տեսքով փոխանցվում են ժառանգին կամ

(գ) փոխանցվում են ժառանգի՝ Կառավարչի մոտ բացված կենսաթոշակային հաշվին:

15.3. Փայերը մարելու, ժառանգի կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու կամ ժառանգի՝ Կառավարչի մոտ բացված կենսաթոշակային հաշվին փոխանցելու նպատակով ժառանգորդը Ժառանգության դիմում է ներկայացնում Կառավարչին՝ դրան կցելով ժառանգության վկայականը:

15.4. Դիմումի ստանալուց 10 Աշխատանքային օրվա ընթացքում Կառավարիչն իրականացնում է դիմումով պահանջվող 15.2. կետով նախատեսված գործողություններից որևէ մեկը:

15.5. Մասնակցի Ֆոնդի փայերը դատական կարգով անժառանգ ճանաչվելու դեպքում փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

16. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16.1. Կառավարչի գործունեության հիմքերը սահմանվում են Կառավարչի կանոնադրությամբ, սույն Կանոններով և օրենսդրությամբ:

16.2. Կառավարիչն իրավունք ունի տիրապետելու և տնօրինելու Ֆոնդի ակտիվները և իրականացնելու դրանից բխող բոլոր իրավունքները: Կառավարիչը իր անունից Ֆոնդի հաշվին գործարքներ է իրականացնում Ֆոնդի ակտիվներով (այդ թվում՝ Ֆոնդի ակտիվներով ներդրումների իրականացում)՝ նշելով, որ ինքը հանդես է գալիս որպես ֆոնդի կառավարիչ: Սույն կանոնով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 968.1 հոդվածի 6-րդ մասով նախատեսված պահանջները կհամարվեն կատարված այն դեպքում, երբ Կառավարիչը գրավոր փաստաթղթերում իր անվանումից հետո արել է «Ֆ.Կ.» նշումը:

16.3. Կառավարիչն իրավունք ունի ֆոնդերի հայտերը համախմբել Արժեթղթերով գործարքներ իրականացնելիս: Գործարքների բաշխման քաղաքականության հիմնական սկզբունքները, շահերի բախման կանխարգելման դրույթները սահմանվում

են Կառավարչի Ֆոնդի Կառավարման Կանոնակարգով և Կառավարչի Գործարար Վարվելակերպի Կանոնակարգում:

16.4. Ֆոնդի ակտիվները կառավարելու նպատակով Կառավարչի գլխավոր տնօրենը կամ Խորհրդի նախագահը նշանակում է ֆոնդի կառավարիչ, որի պարտականությունները ներառում են Ֆոնդի ակտիվների ներդրման հետ կապված ներդրումային որոշումների կայացումը և Ֆոնդի կառավարման հետ կապված այլ գործողություններ:

16.5. Կառավարիչը իրականացնում է 16.11. կետում նշված պարտականությունները, եթե այդ պարտականությունները չեն փոխանցվել երրորդ անձանց պայմանագրային հիմունքներով: Կառավարիչը ներդնում է Ֆոնդի ակտիվները սույն Կանոններով սահմանված ներդրումային քաղաքականությանը համաձայն՝ հաշվի առնելով Կանոններով և օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները: Կառավարիչը ձեռք է բերում բավարար տեղեկատվություն այն ակտիվների վերաբերյալ, որոնք պլանավորում է ձեռք բերել կամ արդեն ձեռք է բերել Ֆոնդի հաշվին, իրականացնում է այն թողարկողի ֆինանսատնտեսական վիճակի մոնիթորինգը, որի արժեթղթերը պլանավորում է ձեռք բերել կամ արդեն ձեռք է բերել Ֆոնդի հաշվին, ինչպես նաև ձեռք է բերում բավարար տեղեկատվություն գործընկերների վճարունակության վերաբերյալ, որոնց հետ Ֆոնդի հաշվին իրականացվում են գործառնություններ:

16.6. Կառավարիչը Ֆոնդի ակտիվները կառավարում է իր սեփական ակտիվներից և Կառավարչի կողմից կառավարվող այլ ֆոնդերի ակտիվներից ու ակտիվների համախմբերից առանձին: Ֆոնդի ակտիվները չեն ներառվում Կառավարչի լուծարային գույքի կազմում և Կառավարչի պարտատերերի պահանջները չեն կարող բավարարվել այդ ակտիվների հաշվին:

16.7. Կառավարչի կողմից ձեռքբերվող և տնօրինվող Ֆոնդի փայերի քանակը չի կարող պակաս լինել Ֆոնդի փայերի ընդհանուր քանակի 0.15%-ից: Կառավարիչը կարող է ձեռք բերել կամ մարել Ֆոնդի փայերը յուրաքանչյուր Աշխատանքային օր: Օրենսդրությամբ սահմանված դեպքերում Կառավարիչը ծանուցում է Կենտրոնական բանկին իր կողմից փայերի ձեռքբերման կամ մարման մասին: Կառավարչի կողմից Ֆոնդում մասնակցության չափը հրապարակվում է 20-րդ կետի համաձայն:

16.8. Կառավարիչն իրավունք ունի իր անունից Մասնակիցների կամ Ֆոնդի հաշվին պահանջ ներկայացնել (պարտավոր է, եթե նման պահանջի չներկայացումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել զգալի կորուստների Ֆոնդի կամ նրա Մասնակիցների համար) Պահառուի կամ երրորդ անձանց նկատմամբ:

16.9. Կառավարիչը պատասխանատվություն է կրում իր պարտականությունների խախտման հետևանքով Ֆոնդին կամ Մասնակիցներին պատճառված վնասի համար:

16.10. Կառավարիչը Ֆոնդի ակտիվների պահառության նպատակով Պահառուի հետ կնքում է պահառության պայմանագիր:

16.11. Կառավարիչը կարող է երրորդ անձանց պատվիրակել հետևյալ պարտականությունների կատարումը՝

(ա) Ֆոնդի ակտիվներով ներդրումների իրականացումը,

(բ) Ֆոնդի փայերի թողարկման և մարման կազմակերպումը,

(գ) Ֆոնդի փայերի վաճառքի և մարքեթինգի կազմակերպումը,

(դ) Մասնակիցներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը և այլ սպասարկման ծառայություններ,

(ե) Ֆոնդի հաշվապահական հաշվառման կազմակերպումը,

(զ) Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի որոշումը,

(է) Ֆոնդի փայերի Ռեեստրի վարումը և Մասնակիցների սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերի տրամադրումը,

(ը) Կառավարչի և Ֆոնդի գործունեության օրենսդրությանը համապատասխանության մոնիթորինգը, ներառյալ համապատասխան ներքին աուդիտի համակարգի ներդրումը:

16.12. Պարտականությունների փոխանցումը երրորդ անձանց չի ազատում կառավարչին Ֆոնդի կառավարման պարտավորությունից: Ֆոնդի ակտիվներով ներդրումների իրականացումը կարող է Կառավարչի կողմից փոխանցվել երրորդ անձի միայն Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված ակտիվների այն առավելագույն չափի համաձայն, որոնց ներդրման կառավարումը կարող է փոխանցվել երրորդ անձի, ինչպես նաև Կառավարչի կողմից որոշված ներդրումային քաղաքականության և նշված քաղաքականության կիրառման վերաբերյալ Կառավարչի ցանկացած որոշման համաձայն:

16.13. Կառավարիչն իրավունք ունի փոխանցել Մասնակիցների տվյալները, այդ թվում՝ անձնական տվյալները, միևնույն խմբին պատկանող ցանկացած իրավաբանական անձի, քանի որ Կառավարիչը Մասնակիցներին իրենց տվյալների վերաբերյալ հարցում անելու և ի պատասխան նրանցից տվյալներ ստանալու իր իրավունքն իրականացնում է Մասնակցին նույնականացնելու և Կառավարչի ու Մասնակցի հարաբերությունները լավագույնս կառավարելու նպատակով:

17. ՊԱՀԱՌՈՒԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

17.1. Պահառուն ի պահ է ընդունում և հաշվառում Ֆոնդի ակտիվները և իրականացնում է օրենսդրությամբ իրեն վերապահված այլ պարտականություններ:

17.2. Պահառուն իրավունք ունի պայմանագրեր կնքել Ֆոնդի ակտիվների պահառությունը, դրանց հետ կապված գործառնությունների և Պահառուի այլ պարտականությունների իրականացումը երրորդ անձանց փոխանցելու նպատակով՝ Պահառության պայմանագրով սահմանված կարգով: Պահառուն Ֆոնդի ակտիվների պահառության նպատակով երրորդ անձանց ընտրությունը կատարում է պատշաճ ուսումնասիրությամբ երրորդ անձի վստահելիությունն ապահովելու նպատակով, հատկապես արտասահմանյան Արժեթղթերի դեպքում կամ այն դեպքերում, երբ առավել

արդյունավետ է երրորդ անձանց ծառայություններից օգտվելը: Նախքան պարտականությունների փոխանցումը և դրանից հետո Պահառուն ստուգում է երրորդ անձի կազմակերպչական և վարչատեխնիկական մակարդակի և նրա ֆինանսական վիճակի բավարարությունը պայմանագրում սահմանված պարտականությունների կատարմանը:

17.3. Պահառուի կողմից Ֆոնդի ակտիվների պահառությունը երրորդ անձանց պատվիրակելու դեպքում Ֆոնդին կամ Մասնակիցներին ուղղակիորեն հասցված վնասների համար պատասխանատվություն է կրում Պահառուն, եթե վերջինս Ֆոնդի ակտիվների պահառություն իրականացնող երրորդ անձանց ընտրությունը կատարել է ոչ պատշաճ ուսումնասիրությամբ կամ ձախողել է նրանց նկատմամբ վերահսկողության իրականացումը:

18. ՓԱՅԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ

18.1. Ֆոնդի փայերի սեփականության իրավունքը և Մասնակիցների ու Կառավարչի համար Ֆոնդի փայերի տիրապետումից առաջացող իրավունքներն ու պարտականությունները ծագում են Ռեեստրում գրանցում կատարելու պահից (այսինքն՝ Մասնակիցների համար Ռեեստրում բացված կենսաթոշակային հաշիվներում փայերի գրանցման պահից): Մասնակիցը, փայերով գործարքներ իրականացնելու մտադրության մասին հայտարարելով, համաձայնություն է տալիս իրեն վերաբերող տեղեկատվության (ներառյալ անձնական տվյալները) օգտագործմանը Ռեեստրի վարման անհրաժեշտության շրջանակներում: Մասնակիցն իրավունք ունի հիմնվել Ռեեստրում կատարված գրանցումների վրա իր իրավունքներն իրականացնելիս և երրորդ անձանց նկատմամբ իր պարտականությունները կատարելիս:

18.2. Ռեեստրի վարումը և Ռեեստրավարի պարտականությունները հանդիսանում են ԱՇՄ-ի և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի կարգավորման առարկա: Ռեեստրում ներառված տեղեկատվությունը պահպանվում է էլեկտրոնային եղանակով:

18.3. Ռեեստրավարը Ռեեստրում գրանցումները կատարում է՝ հիմնվելով Ֆոնդի փայերով իրականացված գործառնությունների տեղեկատվության վրա: Գրանցումներ կարող են կատարվել նաև դատարանի որոշման կամ Ռեեստրավարի կողմից ընդունելի այլ հիմքերով:

18.4. Ռեեստրավարի կողմից գրանցումներ կատարելու համար ընդունված տեղեկատվությունն ու փաստաթղթերը պահպանվում են վերջինիս կողմից գրանցման կատարման պահից հետո առնվազն 10 տարի: Տեղեկատվությունը պահպանվում է փաստաթղթային տեսքով կամ այնպիսի ձևով, որը կարող է գրավոր վերարտադրվել:

19. ՖՈՆԴԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐՆ ՈՒ ԾԱԽՍԵՐԸ

19.1. Ֆոնդի հաշվին կատարվող վճարների և ծախսերի սպառիչ ցանկը ներկայացված է 9.1. կետում:

19.2. Կառավարչի Պարգևավճարի դրույքաչափը սահմանվում է տարեկան Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի (որը որոշվում է տվյալ օրը ակտիվների արժեքի և այդ օրվա

դրությամբ կուտակված պարտավորությունների տարբերությամբ) 1.8%-ի չափով: Կառավարչի պարգևավճարը նվազեցվում է Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքից օրական կտրվածքով և վճարվում է մինչև յուրաքանչյուր ամսվա 10-րդ օրը առնվազն նախորդ ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար: Կառավարչի պարգևավճարի հաշվարկման բազիսը հետևյալն է՝ հաշվատու ժամանակաշրջանի օրերի փաստացի թիվ հարաբերած տարվա օրերի փաստացի թիվ (actual/actual):

19.3. Ֆոնդի ակտիվների մի մասը կարող է ներդրվել Ներդրումային ֆոնդերի կողմից թողարկված Արժեթղթերում, որոնց կառավարիչների կողմից գանձվող կառավարման վճարների առավելագույն չափը կազմում է 5%:

19.4. Պահառուի պարգևավճարի դրույքաչափը սահմանվում է տարեկան Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի (որը որոշվում է տվյալ օրը ակտիվների արժեքի և այդ օրվա դրությամբ կուտակված պարտավորությունների տարբերությամբ) 0.15%-ի չափով: Նշված պարգևավճարից բացի, Կառավարիչը Ֆոնդի հաշվին փոխհատուցում է Պահառուին իր (Կառավարչի) հանձնարարականը կատարելու, դեպո հաշվի սպասարկման, ինչպես նաև Ֆոնդի ակտիվների հաշվին Պահառուական ծառայությունների շրջանակով պայմանավորված՝ երրորդ անձանց (դեպոզիտարիաներ, ֆինանսական գործակալներ, օպերատորներ, բորսաներ) վճարման համար, ինչպես նաև Պահառուի կողմից մատուցված լրացուցիչ ծառայությունների և պահառության ծառայության հետ ուղղակիորեն կապված այն ծառայությունների համար, որանց մատուցումը պահանջում է Կառավարչի նախնական համաձայնությունը: Պահառուի պարգևավճարը նվազեցվում է Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքից օրական կտրվածքով և գանձվում է յուրաքանչյուր եռամսյակ:

19.5. Ֆոնդի հաշվին կատարվող վճարներն ու ծախսերը չեն գերազանցում Ֆոնդի ակտիվների արժեքի 3%-ը օրացուցային տարվա կտրվածքով:

20. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

20.1. Կառավարչի ինտերնետային տնային էջում հասանելի են առնվազն հետևյալ տեղեկատվություններն ու փաստաթղթերը՝

(ա) սույն Կանոնները,

(բ) Կառավարչի կանոնադրությունը, դրանում կատարված փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Կառավարչի ներքին կանոններն ու կարգերը,

(գ) Կառավարչի անվանումը և կոնտակտային տվյալները,

(դ) Կառավարչի կազմում կամ անունից Ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց անունները,

(ե) տեղեկատվություն Ֆոնդում Կառավարչի մասնակցության չափի վերաբերյալ,

(զ) տեղեկություններ Կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, Կառավարչի ղեկավարների, ինչպես նաև

ղեկավարների լիազորությունների և պատասխանատվության ոլորտների վերաբերյալ:

(է) Պահառուի անվանումը և կոնտակտային տվյալները,

(ը) Կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկատվություն,

20.2. Կառավարչի ինտերնետային կայքի յուրաքանչյուր ֆոնդի էջում առնվազն նշվում է՝

(ա) ֆոնդի՝

(Ա) անվանումը և տեսակը

(Բ) ներդրումային քաղաքականության համառոտ նկարագիրը և պորտֆելի կառուցվածքը,

(Գ) յուրաքանչյուր դասի փայի կամ բաժնետոմսի հաշվարկային արժեքը, ինչպես նաև թողարկման և մարման գները և համապատասխան ամսաթիվը, որի դրությամբ դրանք ներկայացված են,

(բ) ֆոնդի տարեկան ու միջանկյալ հաշվետվություններն, արտաքին աուդիտի եզրակացությունն, ինչպես նաև նախորդ երեք տարիների տարեկան հաշվետվությունները: Ֆոնդի տարեկան հաշվետվությունները հրապարակվում են Ֆոնդի ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան 4 ամսվա ընթացքում, իսկ եռամսյակային հաշվետվությունները՝ մինչ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը: Ֆոնդի համար ֆինանսական տարի է հանդիսանում Կառավարչի ֆինանսական տարին: Ընդ որում՝ ֆինանսական հաշվետվություններն ու անկախ աուդիտորի եզրակացությունը նաև ենթակա են հրապարակման առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում:

(գ) ֆոնդի եկամտաբերությունն առնվազն վերջին 5 տարիների համար՝ գրաֆիկորեն ներկայացված, իսկ, եթե ֆոնդը գործում է 5 տարուց պակաս, ապա՝ ֆոնդի եկամտաբերությունը ֆոնդի գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի համար: Ընդ որում, պետք է հնարավոր լինի տեսնել բաց ֆոնդի եկամտաբերությունը ցանկացած ժամանակահատվածի համար:

20.3. Կառավարիչն իրավունք ունի Ֆոնդի վերաբերյալ տեղեկություններ և հաշվետվություններ ուղարկել Մասնակիցների իրեն հայտնի փոստային կամ էլեկտրոնային հասցեներով:

20.4. Կառավարիչը իր տնային էջում տեղեկացնում է սույն կանոնների ինչպես նաև օրենսդրության հիման վրա մամուլում հրապարակված տեղեկատվության մասին, մանրամասն նշելով, թե որ թերթի, որ համարում է տպագրվել բացահայտվող տեղեկատվությունը:

20.5. Կառավարչի գրանցման վայրում և իր ինտերնետային կայքում հասանելի են վերը նշված տեղեկությունները, ինչպես նաև «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների’ կենտրոնական դեպոզիտարիայի եվ դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային

կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ով սահմանված այլ տեղեկություններ:

21. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

21.1. Կառավարչի փոփոխությունն իրականացվում է ՆՖՄ-ի 71-րդ հոդվածի համաձայն:

21.2. Կառավարիչը կարող է այլ կառավարչի փոխանցել Ֆոնդի կառավարումը միայն Ֆոնդի կառավարման փոխանցման պայմանագրի առկայության և Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ՆՖՄ-ով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով տրված նախնական համաձայնության առկայության դեպքում: Ֆոնդի կառավարման փոխանցման պայմանագիրն ուժի մեջ է մտնում այդ պայմանագրում նշված ժամկետում, բայց ոչ շուտ, քան Կենտրոնական բանկի կողմից նախնական համաձայնությունը տրամադրելու օրը:

21.3. Նախքան 21.2. կետով նախատեսված նախնական համաձայնությունն ստանալը Կառավարիչը միջոցներ է ձեռնարկում Ֆոնդի կառավարումը ՆՖՄ-ով սահմանված կարգով այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի փոխանցելու ուղղությամբ:

21.4. Պահառուի փոփոխությունն իրականացվում է ՆՖՄ-ի 90-րդ հոդվածի համաձայն:

21.5. Ֆոնդի պահառության պայմանագիրը դադարելուց հետո Պահառուն պարտավոր է Ֆոնդի ակտիվները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը փոխանցել նոր պահառուին: ՆՖՄ-ով սահմանված կարգով Ֆոնդի պահառության պայմանագրի դադարեցման դեպքում Պահառուն պարտավոր է շարունակել կատարել ՀՀ օրենսդրությամբ, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոններով սահմանված իր պարտականությունները մինչև նոր պահառուի հետ պայմանագրի կնքումը և վերջինիս ֆոնդի ակտիվների փոխանցումը:

21.6. Տեղեկությունը ստանալուց հետո՝ 60-օրյա ժամկետում, Կառավարիչը պարտավոր է պահառության պայմանագիր կնքել այլ պահառուի հետ:

22. ՖՈՆԴԻ ՄԻԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

22.1. Ֆոնդի միացումը կատարվում է Կառավարչի Խորհրդի որոշման հիման վրա:

22.2. Ֆոնդի միացումն իրականացվում է ՆՖՄ-ով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված Կանոնների գրանցումն ուժը կորցրած ճանաչելու և այն ֆոնդի կանոնների մեջ կատարված համապատասխան փոփոխությունների գրանցման միջոցով, որին միացել են:

22.3. Ֆոնդի միացման համար պահանջվում է Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնությունը:

22.4. Ֆոնդը կարող է միանալ միայն Կառավարչի կողմից կառավարվող այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի:

22.5. Միացման դեպքում Ֆոնդի ակտիվները և պարտավորությունները փոխանցվում են այն ֆոնդին, որին միանում է փոխանցման ակտին համապատասխան:

22.6. Ֆոնդի միացման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Կառավարչի հաշվին:

22.7. Կառավարիչը կարող է որոշում կայացնել Ֆոնդի դադարեցման վերաբերյալ միայն այն դեպքում, երբ Ֆոնդի կառավարումը չի փոխանցվել այլ կառավարչի: Պահառուն կարող է որոշում կայացնել Ֆոնդի դադարեցման վերաբերյալ, երբ Ֆոնդի կառավարումը փոխանցվել է Պահառուին և վերջինս Ֆոնդի կառավարումը չի փոխանցել այլ կառավարչի: Ֆոնդի դադարեցման մասին որոշում չկայացվելու դեպքում Կենտրոնական բանկը պարտավոր է պահառուի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ Ֆոնդի դադարեցման պահանջով հայցադիմում ներկայացնել դատարան:

22.8. Կառավարչի կամ Պահառուի կողմից Ֆոնդը կարող է դադարեցվել միայն Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության առկայության դեպքում:

22.9. Ֆոնդի դադարեցման մասին Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալուց հետո Կառավարիչը կամ Պահառուն անհապաղ օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները ներառող հայտարարություն է հրապարակում Ֆոնդի դադարեցման վերաբերյալ առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում և իր Ինտերնետային տնային էջում: Ֆոնդի դադարեցման հաղորդագրության հրապարակման հաջորդ օրվանից Ֆոնդի փայերի թողարկումն ու մարումը կասեցվում է:

22.10. Ֆոնդը դադարելիս կառավարիչը կամ Պահառուն իրականացնում են Ֆոնդի ակտիվների իրացմանը, Ֆոնդի հանդեպ ունեցած պարտավորությունների հավաքագրմանն ու Ֆոնդի պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղված միջոցառումներ: Ֆոնդի հաշվին Ֆոնդի լուծարման ծախսերը ծածկելու նպատակով կարող է օգտագործվել առավելագույնը լուծարման մասին որոշման կայացման օրվա դրությամբ հաշվարկված Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 2%-ը: Ֆոնդի դադարեցման հետ կապված նշված մեծությունը գերազանցող ծախսերը կրում է Կառավարիչը կամ որպես կառավարիչ հանդես եկող անձը:

22.11. Կառավարչի կողմից Ֆոնդի ակտիվները բաշխվում են Ֆոնդի Մասնակիցների միջև Ֆոնդում նրանց մասնակցության չափին համամասնորեն: Ֆոնդի մասնակիցներին նրանց փայերի դիմաց վճարումը կատարվում է բացառապես դրամական միջոցներով: Ֆոնդի լուծարման դեպքում Մասնակիցն իրավունք ունի պահանջելու Պահառուից, որ իրեն բաշխման ենթակա ակտիվների հաշվին իր անունից ձեռք բերվեն այլ (իր ընտրած) կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայեր: Պահառուն պարտավոր է գրավոր և պատշաճ ձևով տեղեկացնել լուծարվող Ֆոնդի բոլոր Մասնակիցներին՝ սույն կետով նախատեսված իրենց իրավունքների և դրանց հետևանքների մասին: Նշված ծանուցումն ստանալու պահից հինգ Աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան պահանջ չներկայացնելու դեպքում համապատասխան ակտիվները միանվագ վճարվում են ֆոնդի ընտրություն չկատարած Մասնակիցներին:

22.12. Կառավարիչը հայտարարություն է հրապարակում բաշխման ենթակա ակտիվների բաշխման վերաբերյալ առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում և իր Ինտերնետային տնային էջում: Փայերը չեղյալ են համարվում, իսկ դրանց հետ կապված պարտավորությունները՝ դադարում վճարումները կատարելու պահից սկսած: Փայերի չեղյալ հայտարարման դեպքում Մարման վճար չի գանձվում:

23. ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

23.1. Սույն Կանոնները փոփոխվում են Կառավարչի Խորհրդի որոշմամբ: Ընդ որում՝ այդ փոփոխությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում միայն Ֆոնդի ներդրումային սահմանափակումներին կամ միջնորդավճարներին վերաբերող էական պայմանների փոփոխություններով:

23.2. Կանոնների փոփոխությունները ՆՖՄ-ով սահմանված կարգով Կենտրոնական բանկում գրանցվելուց կամ Կենտրոնական բանկ ներկայացվելուց հետո համապատասխան հայտարարությունը հրապարակվում է առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում և Ինտերնետային տնային էջում: Կանոնների փոփոխության վերաբերյալ հայտարարություն չի տարածվում հանրապետական տարածում ունեցող մամուլում, եթե Կառավարիչը փոփոխում է Կանոնները միայն օրենսդրության փոփոխություններով պայմանավորված:

23.3. Փոփոխություններն ուժի մեջ են մտնում հանրապետական տարածում ունեցող մամուլում հրապարակվելուց մեկ ամիս հետո, եթե հրապարակված հայտարարությամբ դրանց ուժի մեջ մտնելու ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Կառավարչի կողմից օրենսդրության փոփոխություններով պայմանավորված Կանոններում կատարվող փոփոխությունները կամ այն փոփոխությունները, որոնց համաձայն Կանոններով սահմանված Կառավարչի պարգևավճարը նվազում է, ուժի մեջ են մտնում հանրապետական տարածում ունեցող մամուլում հրապարակվելուց մեկ ամիս հետո, եթե հրապարակված հայտարարությամբ դրանց ուժի մեջ մտնելու ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

23.4. Կանոնների փոփոխված տարբերակը հրապարակվում է առնվազն Ինտերնետային տնային էջում: Կառավարիչն իրավունք ունի Ֆոնդի վերաբերյալ տեղեկություններ և հաշվետվություններ ուղարկել Մասնակիցների իրեն հայտնի փոստային կամ էլեկտրոնային հասցեներով:

Համարակալված, կնքված և կարված է

42 թերթ Քառասուներկու թերթ

ՀՀ կենտրոնական բանկի իրավասու ստորաբաժանման ղեկավար

անունը, ազգանունը ստորագրությունը

Վերահսկող

անունը, ազգանունը ստորագրությունը